# Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ
2018թ. երկրորդ եռամսյակի համար

HSBC

## Բանկի ղեկավարության պատասխանատվությունները

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի («Բանկ») ղեկավարությունը պատասխանատու է Բանկի ֆինանսական վիճակը և ֆինանսական գործունեության արդյունքները, բոլոր էական առումներով, արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հետ կապված Բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, Խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում դրանց բացահայտման համար,
- ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքով պատրաստելու համար, քանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,
- Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Ս. Սարգսյան

Գլխավոր ֆինանսական տնօրենի պաշտոնակատար

Ա. Փինաջյան

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար

## Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են արտացոլում Բանկի ֆինանսական վիճակը 2018թ. հունիսի 30-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար:

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**համապարփակ ֆինանսական արդյունքների մասին**

«30» հունիսի 2018թ.

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**
ՀՀ, ք.Երևան, Տերյան 66

| | Ծնթգ. | 01.04.18-30.06.18թ. հազ. ՀՀ դրամ | 01.01.18-30.06.18թ. հազ. ՀՀ դրամ | 01.04.17-30.06.17թ. հազ. ՀՀ դրամ | 01.01.17-30.06.17թ. հազ. ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 4 | 2,764,313 | 5,508,929 | 3,289,465 | 6,885,761 |
| Տոկոսային ծախս | 4 | (949,443) | (1,970,106) | (1,226,764) | (2,391,338) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **1,814,870** | **3,538,823** | **2,062,701** | **4,494,423** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ | 5 | 681,887 | 1,368,672 | 870,506 | 1,810,435 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս | 6 | (110,359) | (220,769) | (113,450) | (215,571) |
| **Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | | **571,528** | **1,147,903** | **757,056** | **1,594,864** |
| Զուտ օգուտ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից | 7 | (3,233) | (18,534) | (45,743) | (49,884) |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 8 | 135,430 | 350,698 | 338,870 | 588,531 |
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներից | | - | - | - | - |
| Այլ գործառնական եկամուտ | | 39,912 | 72,176 | 18,719 | 170,249 |
| Այլ գործառնական ծախսեր | | (59,734) | (125,520) | (54,336) | (107,656) |
| **Գործառնական եկամուտ** | | **2,498,773** | **4,965,546** | **3,077,267** | **6,690,527** |
| Արժեզրկումից կորուստներ | 9 | (1,006,407) | (516,756) | (2,157,517) | (2,287,811) |
| **Զուտ գործառնական եկամուտ** | | **1,492,366** | **4,448,790** | **919,750** | **4,402,716** |
| Աշխատակազմի գծով ծախսեր | 10 | (1,074,806) | (2,016,400) | (971,381) | (1,927,872) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 11 | (1,217,774) | (2,321,748) | (1,051,870) | (1,981,923) |
| **Շահույթ/(վնասը) նախքան շահութահարկով հարկումը** | | **(800,214)** | **110,642** | **(1,103,501)** | **492,921** |
| Շահութահարկի գծով ծախս /(փոխհատուցում) | 12 | 150,210 | (31,961) | 192,494 | 168,304 |
| **Շահույթ /(վնասը) տարվա համար** | | **(650,004)** | **78,681** | **(911,007)** | **661,225** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի** | | - | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս.* | | - | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների վերագնահատման պահուստ. | | - | | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | | (50,556) | (114,465) | (15,711) | (29,714) |
| - Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | | - | - | - | - |
| *Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս.* | | - | | | |
| - Հողի և շենքերի վերագնահատում | | - | - | - | - |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար՝ առանց շահութահարկի** | | **(50,556)** | **(114,465)** | **(15,711)** | **(29,714)** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | **(700,560)** | **(35,784)** | **(926,718)** | **631,511** |

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Փինացյան

Գլխավոր ֆինանսական տնօրենի պաշտոնակատար՝ Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ «15» հուլիսի 2018թ.

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**ֆինանսական վիճակի մասին**
«30» հունիսի 2018թ.

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**
ՀՀ, ք.Երևան, Տերյան 66

| | Ծնթգ. | 30.06.2018թ. հազ. ՀՀ դրամ | 31.12.2017թ. հազ. ՀՀ դրամ (ստուգված) |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 42,960,558 | 69,465,410 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 14 | 1,185,781 | 1,314,070 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ | 15 | 10,687,243 | 23,299,746 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 16 | 31,803,722 | 10,566,868 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ (տես Ծանոթագրություն 1 ) | 17 | 102,624,877 | 95,431,247 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | | 8,120,274 | - |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | | - | 16,325 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | | 1,142,385 | 1,152,217 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 18 | 3,173,203 | 3,135,984 |
| Այլ ակտիվներ | 19 | 4,040,175 | 4,267,355 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **205,738,218** | **208,649,222** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 20 | 8,516,887 | 6,884,250 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 21 | 154,615,222 | 158,579,491 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | 12 | 22,128 | - |
| Այլ պարտավորություններ | 22 | 3,483,618 | 4,199,145 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **166,637,855** | **169,662,886** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 23 | 18,434,350 | 18,434,350 |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ | | 95,927 | 95,927 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների վերագնահատման պահուստ | | 60,624 | 175,089 |
| Հողի և շենքերի վերագնահատման պահուստ | | 233,772 | 233,772 |
| Չբաշխված շահույթ | | 20,275,690 | 20,047,198 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **39,100,363** | **38,986,336** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **205,738,218** | **208,649,222** |

**Ծանոթագրություն 1՝ Լրացուցիչ տեղեկատվություն Էյչ-Էս-Բի-Սի Խմբի կողմից տրամադրված վարկերի ծավալների վերաբերյալ.**

| | 30.06.2018-ի դրությամբ | 31.12.2017-ի դրությամբ |
|---|---|---|
| Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի, Լոնդոնի կողմից Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի միջնորդությամբ տրամադրված վարկեր | 80,513,816 | 95,381,843 |
| **Ընդամենը վարկեր՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը** | **183,138,693** | **190,813,090** |
| **Ընդամենը ակտիվներ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը** | **286,252,034** | **304,031,065** |

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Փինաջյան

Գլխավոր ֆինանսական տնօրենի պաշտոնակատար՝ Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը ՝ «15» հուլիսի 2018թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ**

«30» հունիսի 2018թ.

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**

ՀՀ, ք.Երևան, Տերյան 66

| | 01/01/18-30/06/18 հազ. ՀՀ դրամ | 01/01/17-30/06/17 հազ. ՀՀ դրամ |
|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Ստացված տոկոսներ | 5,869,060 | 7,390,621 |
| Վճարված տոկոսներ | (2,034,191) | (2,121,940) |
| Ստացված կոմիսիոն և այլ վճարներ | 1,637,936 | 1,901,056 |
| Վճարված կոմիսիոն և այլ վճարներ | (355,426) | (245,487) |
| Զուտ մուտքեր շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների գծով | 78,538 | 134,986 |
| Զուտ մուտքեր արտարժույթի փոխարկումից | 356,221 | 556,594 |
| Զուտ այլ ստացված եկամուտ | 50,159 | (64,126) |
| Աշխատակազմի ծախսերի գծով վճարումներ | (2,429,511) | (1,527,046) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ | (1,206,441) | (1,417,926) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 27,347 | (222,968) |
| Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 12,080,568 | 8,284,886 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | (21,208,549) | (8,622,718) |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | (7,736,370) | 4,963,451 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | (8,128,146) | - |
| Այլ ակտիվներ | (1,166,261) | (32,382) |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 1,803,054 | (3,860,286) |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | - | - |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | (2,757,949) | 3,197,065 |
| Այլ պարտավորություններ | 4,728 | (10,494) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ` նախքան շահութահարկի վճարումը** | **(25,115,233)** | **8,303,287** |
| Կանխավճարված շահութահարկի փոխհատուցում | 3,241 | - |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր** | **(25,111,992)** | **8,303,287** |
| | | |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (489,580) | (128,549) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք | 853 | 3,672 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | **(488,727)** | **(124,877)** |
| | | |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Ստորադաս փոխառությունների մարումներ | - | - |
| **Ֆինանսական գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | **-** | **-** |
| | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | (25,600,719) | 8,178,410 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (678,097) | 211,575 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | 68,935,410 | 53,546,716 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | **42,656,594** | **61,936,701** |

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար` Ա. Փինացյան

Գլխավոր ֆինանսական տնօրենի պաշտոնակատար` Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը ` «15» հուլիսի 2018թ.

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

«30» հունիսի 2018թ.

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**

ՀՀ, ք.Երևան, Տերյան 66

| | Բաժնետիրական կապիտալ | Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ | Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ | Հողի և շենքերի վերագնահատման պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| հազ. ՀՀ դրամ | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.** | 18,434,350 | 94,788 | 257,091 | 233,772 | 28,589,629 | 47,609,630 |
| Արժեզրկումից կորուստների վերահաշվարկ | | | | | (602,408) | (602,408) |
| **Վերահաշվարկված մնացորդը առ 1 հունվարի 2017թ.** | 18,434,350 | 94,788 | 257,091 | 233,772 | 27,987,221 | 47,007,222 |
| Շահույթ տարվա համար | | | | | 661,225 | 661,225 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| **Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս** | | | | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | | | (29,715) | | - | (29,715) |
| Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | | | - | | - | - |
| **Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս** | | | | | | |
| Հողի և շենքերի վերագնահատում | | | | | | |
| **Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | (29,715) | - | - | (29,715) |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | | (29,715) | - | 661,225 | 631,510 |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | | | | |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ | | 2,820 | | | | 2,820 |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | | 2,820 | | | | 2,820 |
| **Մնացորդը առ 30 հունիսի 2017թ.** | 18,434,350 | 97,608 | 227,376 | 233,772 | 28,648,446 | 47,641,552 |
| | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.** | 18,434,350 | 95,927 | 175,089 | 233,772 | 20,047,198 | 38,986,336 |
| ՖՀՄՍ 9-ի նախնական կիրառման հետ կապված փոփոխություններ | | | | | 149,811 | 149,811 |
| **Վերահաշվարկված մնացորդը առ 1 հունվարի 2018թ.** | | | | | 20,197,009 | 39,136,147 |
| Շահույթ տարվա համար | | | | | 78,681 | 78,681 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| **Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս** | | | | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | | | (114,465) | | - | (114,465) |
| Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | | | - | | - | - |
| **Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս** | | | | | | |
| Հողի և շենքերի վերագնահատում | | | | | | |
| **Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | (114,465) | | - | (114,465) |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | | (114,465) | | 78,681 | (35,784) |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | | | | |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ | | | | | | |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | | | | | | |
| **Մնացորդը առ30 հունիսի 2018թ.** | 18,434,350 | 95,927 | 60,624 | 233,772 | 20,275,690 | 39,100,363 |

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Փինաջյան

Գլխավոր ֆինանսական տնօրենի պաշտոնակատար՝ Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը ՝ «15» հուլիսի 2018թ.

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Ներածություն

### (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն («Բանկ») Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 1995թ.-ին: Բանկը տրամադրում է ֆինանսական և բանկային ծառայությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում տեղակայված գլխամասային գրասենյակի ու մասնաճյուղերի միջոցով: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից:

2018թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկն ուներ 9 գրասենյակ ու մասնաճյուղ (2017թ.-ին՝9): Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին քանակը կազմում էր 409 (2017թ.-ին՝ 414).

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փ. 66:

Բանկի սեփականատերերն են՝ Էյչ-Էս-Բի-Սի Յուրըփ Բի Վի (70%) և Ուինգս Իստաբլիշմենթ (30%) կազմակերպությունները:

Բանկի մայր կազմակերպությունն է Էյչ-Էս-Բի-Սի Յուրըփ Բի Վի-ն: Բանկի վերջնական վերահսկող կողմն է Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս Փի-Էլ-Սի-ն:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 30-ում:

### (բ) Բանկի գործառնական միջավայրը

Բանկի հիմնական գործունեության վայրը Հայաստանի Հանրապետությունն է: Հետևաբար, Բանկը ենթարկվում է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաներին, որոնք բնութագրվում են զարգացող տնտեսություններին հատուկ որոշակի հատկանիշներով:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա զգալի ազդեցություն է թողնում Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը և Ռուսաստանից դեպի Հայաստան կանխիկի նշանակալի հոսքերը: Հետևաբար գործարար ակտիվության նվազումը, բաժնետոմսերի շուկայի անկայունությունը և ՌԴ-ում առկա այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության կորպորատիվ և ֆինանսական հատվածների վրա:

Հայաստանի Հանրապետության շուկան դրսևորում է զարգացող տնտեսություններին հատուկ հատկանիշներ: Օրենսդրական, հարկային և կանոնակարգային հիմունքները շարունակում են զարգանալ և ենթակա են հաճախակի փոփոխությունների ու տարբեր մեկնաբանումների: Հայաստանի տնտեսությունը 2015-2016թթ.-ի տնտեսական անկումից հետո 2017-2018թթ.-ին գրանցել է աճ: Ֆինանսական շուկան շարունակում է մնալ անկայուն: Այսպիսի գործառնական միջավայրը մեծ ազդեցություն ունի Բանկի գործառնությունների և ֆինանսական դրության վրա: Ղեկավարությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Բանկի գործունեության կայունությունը ապահովելու համար:

# 1 Ներածություն (շարունակություն)

Սակայն ներկայիս տնտեսական իրավիճակի ազդեցությունը ապագայի վրա դժվար կանխատեսելի է և ղեկավարության ներկայիս սպասումներն ու գնահատումները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Վարկերի արժեզրկման պահուստը հիմնվում է ղեկավարության՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տվյալ ակտիվների գնահատման վրա, հաշվի առնելով նաև դրամական միջոցների հոսքերը, որոնք կարող են առաջանալ բռնագանձումից, հանած գրավի ձեռք բերման և վաճառքի ծախսերը:

Հայաստանի Հանրապետությունում գրավի բազմազան տեսակների, հատկապես անշարժ գույքի, շուկան ենթարկվել է տնտեսական անկման ազդեցությանը, ինչը հանգեցրել է որոշակի տեսակի ակտիվների իրացվելիության ցածր մակարդակի:

# 2 Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

## (բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման, բռնագանձված գրավի, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների: Այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ օգտագործվող հաշվապահական հիմնական քաղաքականությունները ներքոշարադրված են: Այս քաղաքականությունները վերաբերում են ներկայացված բոլոր ժամանակաշրջաններին, եթե այլ բան նշված չէ:

## (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

## 2 Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### (դ) Գնահատումները և դատողությունները

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Էական անորոշ գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Հետաձգված հարկային ակտիվներ – Ծանոթագրություն 12
- Ածանցյալ գործիքների իրական արժեք – Ծանոթագրություն 14;
- Վարկերի արժեզրկման գնահատում – Ծանոթգրություն 17;
- Հողի և շինությունների վերագնահատում – Ծանոթագրություն 18;
- Բռնագանձված գրավի վերագնահատում – Ծանոթագրություն 19;
- Ֆինանսական գործիքների իրական արժեք – Ծանոթագրություն 31.

### (ե) Իրացվելիության տեսանկյունից ֆինանսական դրության ներկայացում

Բանկը չունի հստակ տարանջատվող գործառնությունների շրջան, այդ իսկ պատճառով ֆինանսական դիրքերում ակտիվների և պարտավորությունների բաժանումը ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի կատարված չէ: Փոխարենն ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են իրացվելիության տեսանկյունից: Ֆինանսական գործիքների մարումների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 24-ում:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### (ա) Արտարժույթի փոխարկում և արտարժույթով հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթին գործարքների օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված,

արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի ընթացքում վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահանջներին համապատասխանող տարբերությունների, հեջի արդյունավետ լինելու չափով, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար կիրառվող փոխարժեքները 2018 թ.-ի հունիսի 30-ին կազմել են 1 ԱՄՆ դոլարի դիմաց 482.24 դրամ (2017թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 484.1 դրամ), 1 Եվրոյի դիմաց 561.81 դրամ (2017թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 580.10 դրամ), 1 Անգլիական ֆունտ ստերլինգի դիմաց 634.05 դրամ (2017թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 653.54 դրամ):

### (բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Կանխիկը և կանխիկին հավասարեցված միջոցները արագ փոխարկվում են դրամական միջոցների և վերագնահատումից մեծ փոփոխության չեն ենթարկվում: Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող միջոցները (նոստրո հաշիվներ, օվերնայթ ավանդները, մինչև երեք ամիս մարման ժամկետով տեղաբաշխված միջոցները): ՀՀ ԿԲ-ում պահվող նվազագույն պահուստը համարվում է դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված չէ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### (գ) Ֆինանսական գործիքներ

2018թ-ի հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար ՖՀՄՍ 9-ը փոխարինել է ՀՀՄՍ 39 *Ֆինանսական գործիքներ, ճանաչումը և չափումը* ստանդարտին: ՖՀՄՍ 9-ի շրջանակներում հաշվառվող ֆինանսական գործիքների համար Բանկը չի վերահաշվարկել 2017թ-ի համեմատական ինֆորմացիան: Հետևաբար, 2017թ. համեմատական ինֆորմացիան ներկայացված է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համեմատելի չէ 2018թ-ի համար ներկայացված ինֆորմացիայի հետ: ՖՀՄՍ 9-ի անցնելու արդյունքում առաջացած տարբերությունները անմիջականորեն ճանաչվել են 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում և ներկայացված են ստորև:

### *(i) Դասակարգում*

ՖՀՄՍ 9 *Ֆինանսական գործիքներ* ստանդարտի համաձայն, բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն բավարարում բացառապես հիմնական գումարի ու տոկոսագումարի վճարման համար պահվելու չափանիշին, սկզբնական ճանաչման պահին դասակարգվում են որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ: Այս չափանիշի համաձայն, պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում վարկավորման հիմնական պայմաններին, չափվում են որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: Այդ չափանիշին բավարարող պարտքային ֆինանսական ակտիվների համար դասակարգումը սկզբնական ճանաչման պահին որոշվում է գործիքների կառավարման բիզնես մոդելի հիման վրա.

-պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, չափվում են ամորտիզացվող արժեքով,

-պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,

-պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են այլ հիմունքներով, ներառյալ առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները, չափվում են իրական արժեքով՝ շահույթի/վնասի միջոցով:

Բաժնային ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին դասակարգվում են որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող, բացի այն դեպքերից, երբ առանց հետագայում վերանայելու իրավունքի որոշում է կայացվել դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող: Բաժնային գործիքների համար, որոնք դասակարգված են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, բոլոր իրացված և չիրացված օգուտները ու վնասները, բացառությամբ ստացված շահաբաժիններից, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանց հետագա վերադասակարգման շահույթ/վնասի:

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

*(ii) Ճանաչում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

*(iii) Չափում*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների, որոնց նկատմամբ կիրառվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
-
- ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվների, որոնց նկատմամբ կիրառվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
-
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով հանած արժեզրկումը, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Սկզբնական արժեքը ակտիվի ձեռքբերման ժամանակ դրա դիմաց վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է կամ այլ հատուցման ձևով տրված իրական արժեքն է, և ներառում է գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական արժեքի չափումը կիրառելի է միայն այնպիսի բաժնեմասային գործիքներում կատարված ներդրումների դեպքում, որոնք չունեն գնանշված շուկայական գին և որոնց իրական արժեքը արժանահավատորեն չի կարող չափվել, ինչպես նաև նման բաժնեմասային գործիքների հետ կապված և վերջիններիս մատակարարմամբ մարվող ածանցյալ գործիքները: Տե՛ս ծանոթագրություն 14-ը:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### *(iv) Ամորտիզացված արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### *(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ*

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին նշված ամսաթվի դրությամբ Բանկը մուտքի հնարավորություն ունի: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Բանկը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

### *(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս*

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

### *(vii) Ապաճանաչում*

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Այն գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Բանկը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացող օգուտում կամ վնասում:

Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

### *(viii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր*

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ կամ հաճախորդներին տրված վարկեր հոդվածներում՝ ըստ կիրառելիության: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրային նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

### *(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են ֆորվարդները, սփոփերը, արտարժույթային փոխարկումները:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ կնքվում է ածանցյալ գործիքի պայմանագիրը: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություններ՝ բացասական իրական արժեքի դեպքում:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

### *(x) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Այդպիսի հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

### (դ) Հիմնական միջոցներ

### *(i) Սեփական ակտիվներ*

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ հողի և շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

### *(ii) Վերագնահատում*

Հողատարածքը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների շարժից: Երբ հողի կամ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ ուղղակիորեն սեփական կապիտալում: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ հողի կամ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Հողի և շենքերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունն օգտվում է անկախ գնահատող ընկերությունների ծառայություններից: Գնահատող ընկերությունները կիրառում են եկամտային մոտեցումը և համադրելի վաճառքների մոտեցումը՝ կախված տեղեկատվության մատչելիությունից և հուսալիությունից:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### *(iii) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված գույքի բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում: Հողի և անավարտ շինարարության գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| – շենքեր | 20 տարի |
| – վարձակալված գույքի բարելավումներ | մինչև 10 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – համակարգչային սարքավորումներ | 4-ից 7 տարի |
| – այլ | 5 տարի |

### (ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման կապիտալ ծախսերը ներառում են առանձին ծրագրերի ձեռքբերման և դրանց ներդրման ծախսերը:

Ոչ նյութական ակտիվների գծով կատարած հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ ավելացնում են այն ակտիվի ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:

Համակարգչային ծրագրերի զարգացման կամ պահպանման ծախսերը ճանաչվում են որպես ծախս՝ կատարվելու ժամանակ:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| – համակարգչային ծրագրեր | 3-ից 5 տարի |
| – այլ | 10 տարի |

### (զ) Բռնագանձված գրավ

Բռնագանձված գրավն իրենից ներկայացնում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից ձեռք են բերվել ժամկետանց վարկերի մարման նպատակով: Ակտիվները ձեռք բերման ժամանակ սկզբնապես գրանցվում են իրական արժեքով և ներառվում են հիմնական միջոցներում, այլ ֆինանսական ակտիվներում, ներդրումային միջոցներում կամ այլ ակտիվների պաշարների կազմում՝ կախված իրենց բնույթից, ինչպես նաև այդ ակտիվների վերականգնման վերաբերյալ Բանկի մտադրությունից: Հետագայում դրանք վերաչափվում են համապատասխան արժեքով ու հաշվառվում են համաձայն այդ ակտիվների կատեգորիաների հաշվապահական հաշվառման քաղաքականության:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### (է) Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ

Բանկերին տրամադրված վարկերն ու կանխավճարները հաշվառվում են, երբ Բանկը թղթակից բանկերին տրամադրում է դրամական միջոցներ ոչ առևտրային նպատակով՝ ապահովելով չգնանշված, ոչ ածանցյալ գործիքներից ստացվող պարտավորվածություն ֆիքսված/կանխորոշված ամսաթվերով: Բանկերին տրամադրված վարկերը և կանխավճարները հաշվարկվում են ամորտիզացված արժեքով:

### (ը) Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ

Հաճախորդներին տրամադրված վարկերն ու կանխավճարները հաշվառվում են, երբ Բանկը տրամադրում է դրամական միջոցներ հաճախորդներին՝ ապահովելով չգնանշված, ոչ ածանցյալ գործիքներից ստացվող պարտավորվածություն ֆիքսված/կանխորոշված ամսաթվերով: Հաճախորդներին տրամադրված վարկերը հաշվառվում են ամորտիզացոն արժեքով:

### (թ) Արժեզրկում

### *(i) ֆինանսական ակտիվներ*

**Հնարավոր վարկային կորստի չափում**

Հնարավոր վարկային կորուստը (ECL) գնահատվում է որպես հավանականություններով կշռված ապագա դրամական հոսքերի ներկա արժեք (այսինքն, վարկային կորուստների միջին կշռված արժեքն է, որտեղ որպես կշիռներ օգտագործվում են տվյալ ժամանակահատվածի դեֆոլտի ռիսկերը): Հնարավոր վարկային կորստի չափումը անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների բազմության գնահատման միջոցով: Հնարավոր վարկային կորստի չափումը հիմնված է Բանկի կողմից օգտագործվող հետևյալ բաղադրիչների վրա.

Դեֆոլտին ենթարկվածության չափը (EAD) ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի արժեքի գնահատումն է, հաշվի առնելով գործիքի արժեքում հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունները, ներառյալ հիմնական գումարի ու տոկոսագումարի մարումները և վարկային սահմանաչափերի օգտագործումը:

Դեֆոլտի հավանականությունը (PD) տվյալ ժամանակահատվածում դեֆոլտի տեղի ունենալու հավանականության գնահատումն է:

Դեֆոլտի արդյունքում վնասի չափը (LGD) դեֆոլտի դեպքում առաջացող կորստի գնահատումն է: Այն հիմնված է վճարման ենթակա և վարկատուի կողմից ակնկալվող պայմանագրային դրամական հոսքերի տարբերության վրա, ներառյալ ցանկացած գրավի իրացումից ակնկալվող հոսքերը: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտին ենթարկվածության չափի որոշակի տոկոս:

Զեղչատոկոսը (discount rate) գործիք է ներկա արժեքից ակնկալվող կորուստը հաշվետու ամսաթվի դրությամբ զեղչելու համար: Զեղչատոկոսն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիքի էֆեկտիվ տոկոսադրույքը կամ դրա մոտարկումը:

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Կյանքի տևողության ժամանակահատվածն (lifetime period) այն առավելագույն ժամանակահատվածն է, ներառյալ ժամանակահատվածի երկարացման հնարավորությունները, որի ընթացքում պետք է չափվի հնարավոր վարկային կորուստը: Ֆիքսված ժամկետայնությամբ վարկերի համար կյանքի տևողության ժամանակահատվածը հավասար է մնացած պայմանագրային ժամանակահատվածին: Վերականգնվող վարկային գծերի, վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար այն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը, որի ընթացքում կազմակերպությունն վարկավորում իրականացնելու պայմանագրային պարտավորություն ունի: Ֆիզիկական անձանց տրամադրված վարկային քարտերի համար այդ ժամանակահատվածը որոշվում է ներքին վիճակագրության հիման վրա:

Կյանքի տևողության հնարավոր վարկային կորուստը (lifetime ECL) գնահատվում է ֆինանսական գործիքի մնացորդային կյանքի ընթացքում ստացվելիք բոլոր դրամական հոսքերի ներկա արժեքի հիման վրա:

12 ամսվա հնարավոր վարկային կորուստը (12 months ECL) կյանքի տևողության հնարավոր վարկային կորստի այն մասն է, որը ստացվում է հաշվետու ամսվանից հետո 12 ամիսների ընթացքում ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտի դեպքում, որը սահմանափակվում է ֆինանսական գործիքի մնացորդային պայմանագրային կյանքի տևողությամբ:

Կանխատեսվող ինֆորմացիան (forward looking information) այն ինֆորմացիան է, որը ներառում է հիմնական մակրոտնտեսական փոփոխականները, որոնք ազդում են յուրաքանչյուր պորտֆելային սեգմենտի համար գնահատված վարկային ռիսկի և սպասվող վարկային կորուստների վրա: Կանխատեսվող ինֆորմացիան օգտագործվում է ՖՀՄՍ 9-ի շրջանակներում հնարավոր վարկային կորստի չափման համար:

Վարկային փոխարկման գործոնը (CCF) գործակից է, որը ցույց է տալիս տվյալ ժամանակահատվածում հետհաշվեկշռային գումարները հաշվեկշռայինի փոխարկվելու հավանականությունը: Այն հաշվարկվում է 12 ամսվա համար, ինչպես նաև ակտիվի կյանքի տևողության համար: Կատարված վերլուծության հիման վրա Բանկը համարում է, որ 12 ամսվա և կյանքի տևողության վարկային փոխարկման գործոնները ունեն նույն արժեքը:

Գնման կամ ծագման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվները (POFI) այն ֆինանսական ակտիվներն են, որոնք սկզբնական ճանաչման պահին վարկային արժեզրկում ունեն:

Դեֆոլտային և արժեզրկված ակտիվներ (default and credit-impaired assets) են համարվում այն վարկերը, որոնք բավարարում են հետևյալ մեկ կամ մի քանի չափանիշների.

-վարկառուն իր պայմանագրային վճարումների մասով ավելի քան 90 օր ժամկետանց է,
-Բանկը վարկառուի պարտքը վնասով վաճառել է,
-վարկառուն բավարարում է անհավանական վճարումների չափանիշներին և այլ որակական գործոնների, ինչպիսիք են.
-վարկը վերաձևակերպված է,
-վարկառուն անվճարունակ է (սնանկ է):

Վերը ներկայացված դեֆոլտի սահմանումը կիրառվում է Բանկի բոլոր տեսակի ֆինանսական ակտիվների համար:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Վարկային ռիսկի նշանակալի աճի (SICR) գնահատումը կատարվում է անհատական և խմբային հիմունքներով: Իրավաբանական անձանց տրված վարկերի, միջբանկային վարկերի, ինչպես նաև պարտքային արժեթղթերի համար, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, Վարկային ռիսկի նշանակալի աճը գնահատվում է անհատական հիմունքներով, մոնիտորինգի ենթարկելով ստորև նշված ցուցանիշները: Վարկային ռիսկի նշանակալի աճի հայտնաբերման համար օգտագործվող չափանիշները ենթարկվում են մոնիտորինգի և պարբերաբար վերանայվում են Բանկի Ռիսկերի Դեպարտամենտի կողմից: Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքը ունեցել է Վարկային ռիսկի նշանակալի աճ, երբ բավարարված են հետևյալ մեկ կամ մի քանի որակական կամ քանակական չափանիշները.

Կորպորատիվ վարկառուներին տրամադրված կամ միջբանկային վարկերի համար՝

- ժամկետանց օրերի քանակը մեծ է 30-ից, բայց փոքր է 90-ից,
- վարկային ռիսկը էականորեն աճել է, որն արտահայտվում է ներքին վարկանիշների վրա հիմնված համեմատական շեմով: Վարկային ռիսկի նշանակալի աճը որոշվում է, հիմնվելով ծագման պահի և հաշվետու ամսաթվի դրությամբ վարկանիշների համեմատության վրա, որը յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի համար առանձին է հաշվարկվում: Բանկը վարկանիշի նվազումը որոշում է յուրաքանչյուր վարկանիշի համար առանձին՝ հիմնվելով դեֆոլտի հավանականության աճի և վարկանիշի նվազման հարաբերակցության վրա,
- վարկային ռիսկի ներքին մոնիտորինգի ընթացակարգերի համաձայն ֆինանսական գործիքը հայտնվել է պոտենցիալ խնդրահարույց գործիքների ցանկում (watch and worry lits):

Ֆիզիկական անձանց տրված վարկերի համար՝

-ժամկետանց օրերի քանակը մեծ է 30-ից, բայց փոքր է 90-ից

Եթե առկա են այնպիսի հայտանիշներ, որոնք վկայում են, որ Վարկային ռիսկի նշանակալի աճի չափանիշներն այլևս չեն բավարարվում, գործիքը վերադասակարգվում է Փուլ 1: Եթե որակական ցուցանիշի հիման վրա գործիքը դասակարգվում է, որպես Փուլ 2, ապա Բանկը վերահսկում է արդյոք այդ ցուցանիշը դեռ շարունակում է գոյություն ունենալ, թե փոխվել է:

**Գնահատման մոտեցումների նկարագրություն**

**Ընդհանուր սկզբունքներ**

Գնման կամ ծագման պահին արժեզրկում չունեցող ֆինանսական ակտիվների համար հնարավոր վարկային կորուստները սովորաբար չափվում են երկու տարբեր ժամանակաշրջաններից մեկի համար գնահատված դեֆոլտի ռիսկի հիման վրա, կախված սկզբնական ճանաչումից հետո վարկային ռիսկը աճի էականությունից: Այս մոտեցումը կարող է ամփոփվել հնարավոր վարկային կորստի չափման հետևյալ եռաստիճան մոդելում.

Փուլ 1 –“լավ” կամ “գործող” ֆինանսական գործիքների խումբ, որոնց համար սկզբնական ճանաչումից հետո վարկային ռիսկի մակարդակի էական աճ չի գրանցվել կամ որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ցածր վարկային ռիսկ ունեն: Այս խմբի համար պահուստները ստեղծվում են 12 ամսվա հնարավոր վարկային կորստի չափով և տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հաշվեկշռային արժեքի վրա:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Փուլ 2 –ֆինանսական գործիքների խումբ, որոնց համար սկզբնական ճանաչումից հետո գրանցվել է վարկային ռիսկի մակարդակի էական աճ և որոնք չունեն արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ: Այս խմբի համար պահուստները ստեղծվում են կյանքի տևողության հնարավոր վարկային կորստի չափով և տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հաշվեկշռային արժեքի վրա:

Փուլ 3 –արժեզրկում ունեցող ֆինանսական գործիքներ, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ունեն արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ: Այս խմբի համար պահուստները ստեղծվում են կյանքի տևողության հնարավոր վարկային կորստի չափով և տոկոսային եկամուտը հաշվեգրվում է ամորտիզացված արժեքի վրա:

Գնման կամ ծագման պահին արժեզրկում ունեցող ֆինանսական ակտիվների համար հնարավոր վարկային կորուստը միշտ չափվում է կյանքի տևողության համար և հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը ճանաչում է միայն սկզբնական ճանաչումից հետո կյանքի տևողության համար ակնկալվող վարկային կորուստների կուտակային փոփոխությունները:
Արժեզրկում ունեցող կորպորատիվ վարկերի համար Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատական հիմունքներով:

Ֆիզիկական անձանց վարկերի և արժեզրկում չունեցող կորպորատիվ վարկերի համար Բանկը կատարում է խմբային հիմունքներով արժեզրկման գնահատում: Այս մոտեցումը ներառում է վարկային պորտֆելի խմբավորում միատարր սեգմենտների մեջ՝ հիմնվելով վարկառուների տվյալների վրա, ինչպիսիք են օրինակ, ժամկետայնությունը, կորուստների վերաբերյալ պատմական տվյալները և կանխատեսվող մակրոտնտեսական փոփոխությունները:

**Անհատական հիմունքներով գնահատման մոտեցումներ**

Անհատական հիմունքներով գնահատումը կատարվում է 1Ա “պատվիրված” կամ 1Բ “սկալյար” մոտեցումներով՝ կյանքի տևողության հնարավոր վարկային կորուստը գնահատելու/չափելու միջոցով: Մոտեցման ընտրությունը հիմնված է շեմային հնարավոր վարկային կորստի կամ գործիքի արժեքի վրա:

1Ա “պատվիրված” մոտեցումը կիրառվում է սահմանված շեմից բարձր էական դեպքերի համար: Բանկը սահմանում է տարբեր հնարավոր ելքերով 4 սցենար (սնանկության դեպքերում չորրորդ սցենարը կիրառելի չէ): Բազային (ավելի քան 50% հավանականությամբ) սցենարի հետ միասին, 1Ա “պատվիրված” մոտեցման համար պահանջվում են բազային սցենարից վերև և ներքև շեղվող տարբերակներ: Չորրորդ տարբերակն իրենից ներկայացնում է բազային սցենարի ձախողման դեպքում կիրառվող այտերնատիվ սցենար:

1Բ “սկալյար” մոտեցումը կիրառվում է ավելի պակաս էական դեպքերի համար: Այս դեպքում դիտարկվում է միայն մեկ (բազային) սցենար: Պորտֆելային սկալյար կիրառելով հաշվի են առնվում կշռված ելքերի հավանականութունը և ապագա տնտեսական պայմանները: Պորտֆելային սկալյարն իրենից ներկայացնում է Փուլ 1-ի և Փուլ 2–ի հավանականություններով կշռված հնարավոր վարկային կորուստների հարաբերակցություն:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

**Խմբային հիունքներով գնահատման սկզբունքներ**

Գնահատելու համար, թե որ խմբին է պատկանում վարկային գործիքը, ինչպես նաև արժեզրկման պահուստը խմբային հիմունքներով չափելու համար, Բանկը նույնանման վարկային բնութագրիչների հիման վրա, ինչպիսին է օրինակ խմբի ներսում վարկային ռիսկի ենթարկվածության միատարր լինելը, իր գործիքները խմբավորում է սեգմենտների միջև:

Նույնանման բնութագրիչների օրինակներն ընդգրկում են. հաճախորդի տեսակը (ինչպես, օրինակ, կորպորատիվ կամ ֆիզիկական անձ), պրոդուկտի տեսակը, վարկանիշը, սկզբնական ճանաչման ամսաթիվը, մարմանը մնացած ժամկետայնությունը, գրավի որակը և վարկ/գրավ հարաբերակցությունը: Հնարավոր վարկային կորուստը որոշվում է վարկային ռիսկի պարամետրերի կանխատեսման միջոցով (դեֆոլտին ենթարկվածության չափը, դեֆոլտի հավանականությունը, և դեֆոլտի արդյունքում վնասի չափը), որոնք գնահատվում են յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանի համար կյանքի ողջ տևողության ընթացքում և յուրաքանչյուր առանձին գործիքի կամ խմբային սեգմենտի համար: Այս երեք բաղադրիչները բազմապատկվում են, որից հետո ճշգրտվում են գոյատևելու հավանականությամբ (այսինքն, հաշվի է առնվում գործիքի վճարումը կամ դեֆոլտի ենթարկվելը ավելի վաղ ժամանակահատվածներում): Փաստացի հաշվարկվում են հնարավոր վարկային կորուստները յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանի համար, որոնք հետո զեղչվում են մինչև հաշվետու ամսաթիվ և գումարվում: Հնարավոր վարկային կորստի հաշվարկում օգտագործվող զեղչատոկոսը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքն է կամ դրա մոտարկումը, իսկ գնման կամ ծագման պահին արժեզրկում ունեցող ֆինանսական ակտիվների համար դա վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն է:

Ստորև ներկայացված են վարկային ռիսկի պարամետրերի հաշվարկի հակիրճ բնութագրերը.
Դեֆոլտին ենթարկվածության չափը որոշվում են՝ հիմնվելով ակնկալվող վճարումների վրա, որը կախված է պրոդուկտի տեսակից.

-ամորտիզացվող պրոդուկտների և միանվագ վճարվող վարկերի համար, դեֆոլտին ենթարկվածության չափը հիմնված է պայմանագրային վճարումների վրա, որը վարկառուն կկատարի 12 ամսվա կամ կյանքի տևողության ընթացքում:

-վերականգնվող վարկային պրոդուկտների համար, դեֆոլտին ենթարկվածության չափը կանխատեսվում է ընթացիկ տրամադրված բալանսին ավելացնելով "վարկային փոխարկման ֆակտոր", որը ցույց է տալիս դեֆոլտի պահի դրությամբ մնացած սահմանաչափից սպասվող տրամադրումները: Այս դատողությունները տատանվում են՝ կախված պրոդուկտի տեսակից, ընթացիկ սահմանաչափի օգտագործումից և վարկառուին հատուկ այլ վարքագծային բնութագրումներից:

Հնարավոր վարկային կորուստների հաշվարկի համար կիրառվում է երկու տիպի դեֆոլտի հավանականություն՝ 12 ամսվա և կյանքի տևողության.

-12 ամսվա դեֆոլտի հավանականությունը ցույց է տալիս հաջորդ 12 ամսվա ընթացքում (կամ ֆինանսական գործիքի մնացորդային կյանքի ընթացքում, եթե այն 12 ամսից փոքր է) տեղի ունեցող դեֆոլտի հավանականությունը: Այս պարամետրն օգտագործվում է 12 ամսվա հնարավոր վարկային կորստի հաշվարկի համար: 12 ամսվա դեֆոլտի հավանականության գնահատումը հիմնված է պատմական դեֆոլտի ամենավերջին տվյալների վրա և ճշգրտվում է կանխատեսվող ինֆորմացիայով,

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

-կյանքի տևողության դեֆոլտի հավանականությունը ցույց է տալիս ֆինանսական գործիքի մնացորդային կյանքի ընթացքում դեֆոլտի հավանականությունը: Այս պարամետրն օգտագործվում է կյանքի տևողության հնարավոր վարկային կորուստները հաշվելու համար:

Կյանքի տևողության դեֆոլտի հավանականությունը հաշվելու համար Բանկն օգտագործում է տարբեր վիճակագրական մոտեցումներ, կախված սեգմենտից և պրոդուկտի տեսակից, ինչպիսին է, օրինակ, 12 ամսվա դեֆոլտի հավանականությունների էքստրապոլյացիան՝ հիմնված միգրացիոն մատրիքսների վրա, կյանքի տևողության համար դեֆոլտի հավանականությունը կորերի կառուցումը՝ հիմնված պատմական դեֆոլտի տվյալների վրա, պատահական փոխարժեքի մոտեցման վրա և այլն:

Դեֆոլտի արդյունքում վնասի չափը իրենից ներկայացնում է անվճարունակ վարկի կորստի չափի վերաբերյալ Բանկի սպասումները և գնահատվում է ընդհանուր հիմունքներով, հիմնվելով վերականգնման վիճակագրության ամենավերջին տվյալների վրա:

Հետտեստավորում - Էյչ Էս Բի Սի Խմբի կողմից պարբերաբար վերանայվում են մեթոդոլոգիան և դատողությունները՝ գնահատված և իրական վարկային կորուստների միջև ցանկացած տարբերություն նվազեցնելու նպատակով: Այսպիսի հետտեստավորում իրականացվում է նվազագույնը տարին մեկ անգամ:

### *(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### (ժ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

### (ի) Վարկավորման պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկավորման պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկավորման այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկավորման պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկավորման պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### (լ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերին ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում` առանց հարկային հետևանքների:

### *(i) Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

### (խ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է` կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարած ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեցող ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար: Հետաձգված հարկի գումարը չափվում է` կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս` հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

### (ծ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են բոլոր պարտքային գործիքների համար, հաշվեգրման մեթոդով, շահույթում կամ վնասում` կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:.

### (կ) Աշխատակիցների հատուցումներ

***Անձնակազմի ծախսեր և դրանց հետ կապված վճարներ***

Աշխատավարձերը, ՀՀ պետական կենսաթոշակային և ապահովագրական հիմնադրամներին կատարվող վճարները, վճարվող տարեկան արձակուրդը, անաշխատունակության արձակուրդը, պարգևավճարները և այլ ոչ դրամային փոխհատուցումները հաշվեգրվում են այն տարվա համար, որի ընթացքում Բանկի աշխատակիցների կողմից մատուցվել են համապատասխան ծառայությունները:

***Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ***

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործառնությունները, որոնցում Բանկը ստանում է ապրանքներ կամ ծառայություններ՝ որպես հատուցում վերջնական մայր կազմակերպության բաժնային գործիքների դիմաց, հաշվառվում են որպես բաժնային գործիքներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ:

Աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գծով շնորհների/հատույցների իրական արժեքը տրամադրման ամսաթվի դրությամբ ճանաչվում է որպես աշխատակիցների գծով ծախս, գրանցելով սեփական կապիտալի համապատասխան աճ, այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ աշխատակիցները անվերապահորեն ձեռք են բերում շնորհներ/հատույցներ ստանալու իրավունք: Որպես ծախս ճանաչված գումարը ճշգրտվում է այն շնորհների/հատույցների քանակն արտացոլելու համար, որոնց համար կբավարարվեն դրանց հետ կապված ծառայությունների և ոչ շուկայական իրավունքների առաջացման պայմանները, այնպես, որ որպես ծախս ճանաչված վերջնական գումարը կհիմնվի այն շնորհների/հատույցների քանակի վրա, որոնք համապատասխանում են կապված ծառայությունների և ոչ շուկայական իրականացման պայմաններին՝ իրավունքների առաջացման ամսաթվի դրությամբ:

Եթե իրավունքների առաջացման պահին փոխհատուցում է տրամադրվում խմբի անդամ կազմակերպությանը, վճարումը գրանցվում է սեփական կապիտալում: Վճարման գումարի և տրամադրման օրվա դրությամբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման իրական արժեքի տարբերությունը գրանցվում է չբաշխված շահույթում այն տարում, երբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գծով առաջանում են իրավունքներ և կատարվում է վերջնահաշվարկ:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

### (հ) Բանկերի ավանդներ և մնացորդներ

Բանկերի ավանդներն և մնացորդները գրանցվում են այն պահին, երբ ակտիվը կամ դրամական միջոցը տրամադրում է Բանկին թղթակից բանկերից: Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունը հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

### (ծ) Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հաճախորդների ընթացիկ հաշիվներն և ավանդները ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ են ֆիզիկական անձանց, պետության կամ իրավաբանական հաճախորդների նկատմամբ և հաշվառվում են ամորտիզացիոն արժեքով:

## 4 Զուտ տոկոսային եկամուտ

| | 01/04/18-30/06/18 հազ. դրամ | 01/01/18-30/06/18 հազ. դրամ | 01/04/17-30/06/17 հազ. դրամ | 01/01/17-30/06/17 հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ** | | | | |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 2,106,278 | 4,154,073 | 2,641,151 | 5,538,222 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 258,657 | 652,057 | 412,481 | 935,708 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 225,660 | 430,105 | 137,148 | 242,656 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | 68,170 | 69,266 | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 80,080 | 152,143 | 76,624 | 127,407 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 25,468 | 51,285 | 22,061 | 41,768 |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **2,764,313** | **5,508,929** | **3,289,465** | **6,885,761** |
| **Տոկոսային ծախս** | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 917,301 | 1,905,790 | 1,180,219 | 2,288,351 |
| Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ | 32,142 | 64,316 | 46,545 | 102,987 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | - | - | - | - |
| **Ընդամենը տոկոսային ծախս** | **949,443** | **1,970,106** | **1,226,764** | **2,391,338** |

## 5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

| | 01/04/18-30/06/18 հազ. դրամ | 01/01/18-30/06/18 հազ. դրամ | 01/04/17-30/06/17 հազ. դրամ | 01/01/17-30/06/17 հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Վարկավորման գործառնություններ | 366,245 | 734,807 | 546,474 | 1,123,146 |
| Ակրեդիտիվներ և երաշխիքներ | 77,576 | 165,798 | 119,222 | 295,415 |
| Դրամային փոխանցումներ | 71,865 | 135,601 | 82,129 | 151,413 |
| Վարկային քարտեր | 125,708 | 256,951 | 75,584 | 151,575 |
| Հաշիվների սպասարկում | 24,489 | 48,995 | 28,041 | 56,872 |
| Ավտոմատ գանձման մեքենաների ծառայություններ | 4,196 | 8,449 | 4,903 | 9,781 |
| Ապահովագրական գործակալություն | 2,424 | 4,070 | 2,331 | 4,763 |
| Այլ | 9,384 | 14,001 | 11,822 | 17,470 |
| **Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ** | **681,887** | **1,368,672** | **870,506** | **1,810,435** |

## 6 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

| | 01/04/18-30/06/18 հազ. դրամ | 01/01/18-30/06/18 հազ. դրամ | 01/04/17-30/06/17 հազ. դրամ | 01/01/17-30/06/17 հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Քարտերով իրականացվող գործառնությունների վճարներ | 85,037 | 171,264 | 83,844 | 157,839 |
| Վարկեր և փոխառություններ | - | - | 580 | 10,913 |
| Հաշվարկային գործարքներ | 19,734 | 37,624 | 14,757 | 27,556 |
| Այլ | 5,588 | 11,881 | 14,269 | 19,263 |
| **Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս** | **110,359** | **220,769** | **113,450** | **215,571** |

## 7 Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից

| | 01/04/18-30/06/18 հազ. դրամ | 01/01/18-30/06/18 հազ. դրամ | 01/04/17-30/06/17 հազ. դրամ | 01/01/17-30/06/17 հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Պարտքային ֆինանսական գործիքներ | -6,829 | 9,909 | 17,421 | 28,303 |
| Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր | 3,596 | -28,443 | -63,164 | -78,187 |
| **Ընդամենը զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից** | **-3,233** | **-18,534** | **-45,743** | **-49,884** |

## 8 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

| | 01/04/18-30/06/18 hազ. դրամ | 01/01/18-30/06/18 hազ. դրամ | 01/04/17-30/06/17 hազ. դրամ | 01/01/17-30/06/17 hազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Արտարժույթի փոխարկման գործարքներից եկամուտ | 177,580 | 356,221 | 283,004 | 556,594 |
| Զուտ (վնաս) / օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից | -42,150 | -5,523 | 55,866 | 31,937 |
| **Ընդամենը զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից** | **135,430** | **350,698** | **338,870** | **588,531** |

## 9 Արժեզրկումից կորուստներ

| | 01/04/18-30/06/18 hազ. դրամ | 01/01/18-30/06/18 hազ. դրամ | 01/04/17-30/06/17 hազ. դրամ | 01/01/17-30/06/17 hազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | -36,336 | -96,497 | - | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ | -8,765 | -29,515 | - | |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | 7,872 | 7,872 | | |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 671 | 1,539 | - | |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ (Ծնթգ. 17) | 1,010,446 | 610,292 | 2,150,439 | 2,261,639 |
| Այլ ակտիվներ | 29,229 | 36,339 | 7,078 | 26,172 |
| Պարտավորվածություններ | 3,290 | -13,274 | - | |
| **Ընդամենը արժեզրկումից կորուստներ** | **1,006,407** | **516,756** | **2,157,517** | **2,287,811** |

## 10 Աշխատակազմի գծով ծախսեր

| | 01/04/18-30/06/18 hազ. դրամ | 01/01/18-30/06/18 hազ. դրամ | 01/04/17-30/06/17 hազ. դրամ | 01/01/17-30/06/17 hազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Աշխատակիցների հատուցումներ | 1,074,806 | 2,016,400 | 971,381 | 1,927,872 |
| **Ընդամենը աշխատակազմի գծով ծախսեր** | **1,074,806** | **2,016,400** | **971,381** | **1,927,872** |

## 11 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | 01/04/18-30/06/18 hազ. դրամ | 01/01/18-30/06/18 hազ. դրամ | 01/04/17-30/06/17 hազ. դրամ | 01/01/17-30/06/17 hազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ՏՏ աջակցման ծախսեր և այլ վճարներ | 567,708 | 1,043,551 | 394,903 | 722,311 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 227,658 | 452,282 | 236,586 | 478,815 |
| Հիմնական միջոցների վարձակալություն | 122,088 | 248,286 | 139,730 | 279,047 |
| Գովազդ և շուկայավարում | 19,681 | 30,976 | 21,013 | 39,283 |
| Կապի և տեղեկատվական ծառայություններ | 24,146 | 63,850 | 30,187 | 60,867 |
| Ապահովագրություն | 17,551 | 33,236 | 17,205 | 31,483 |
| Մասնագիտական ծառայություններ | 18,350 | 49,966 | 17,138 | 30,155 |
| ՏՏ-ին վերաբերող ծախսեր | 12,047 | 32,343 | 23,111 | 35,174 |
| Անվտանգության ծառայություն | 34,352 | 54,513 | 26,232 | 53,471 |
| Կոմունալ ծառայություններ | 12,955 | 29,304 | 14,997 | 39,480 |
| Վերանորոգման և պահպանման ծախսեր | 21,225 | 36,646 | 16,540 | 32,103 |
| Արտարժույթի տեղափոխման ծախսեր | 6,269 | 11,637 | 5,886 | 12,953 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 11,229 | 22,520 | 13,866 | 20,817 |
| Գրասենյակային ծախսեր | 4,258 | 8,988 | 6,067 | 10,187 |
| Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր | 24,635 | 43,221 | 16,408 | 24,484 |
| Այլ | 93,622 | 160,429 | 72,001 | 111,293 |
| **Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր** | **1,217,774** | **2,321,748** | **1,051,870** | **1,981,923** |

## 12 Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս

| | 01/04/18-30/06/18 | 01/01/18-30/06/18 | 01/04/17-30/06/17 | 01/01/17-30/06/17 |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ընթացիկ հարկի գծով ծախս/(փոխհատուցում) | -160,043 | 22,128 | -220,700 | -196,510 |
| հետաձգված հարկի գծով ծախս/(փոխհատուցում) | 9,833 | 9,833 | 28,206 | 28,206 |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)** | **-150,210** | **31,961** | **-192,494** | **-168,304** |

2018թ.-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2017թ.-ին՝ 20%):

### Գործող հարկային դրույքի համադրում.

| | 01/04/18-30/06/18 | % | 01/01/18-30/06/18 | % | 01/04/17-30/06/17 | % | 01/01/17-30/06/17 | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | | հազ. դրամ | | հազ. դրամ | | հազ. դրամ | |
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | **-800,214** | | **110,642** | | **-1,103,501** | | **492,921** | |
| Շահութահարկի հաշվարկ՝ կիրառելի հարկային դրույքով | -160,043 | 20.0 | 22,128 | 20.0 | -220,700 | 20.0 | 98,584 | 20.0 |
| Չնվազեցվող ծախսեր/(Չհարկվող եկամուտներ) | 9,832 | -1.2 | 9,832 | 8.9 | 0 | 0.0 | -122,396 | -24.8 |
| Նախորդ տարիներում շահութահարկի (ավել)/պակաս հաշվարկված գումար | 0 | 0.0 | 0 | 0.0 | 28,206 | -2.6 | -144,492 | -29.3 |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)** | **-150,210** | **18.8** | **31,961** | **28.9** | **-192,494** | **17.4** | **-168,304** | **-34.1** |

### Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ եկամտի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2018թ. հունիսի 30-ի և 2017թ. հունիսի 30-ի դրությամբ:

| | 30 հունիսի 2018թ. | | | 30 հունիսի 2017թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **Գումարը մինչև հարկումը** | **Հարկի գծով (ծախս)/ փոխհատուցում** | **Գումարը հարկումից հետո** | **Գումարը մինչև հարկումը** | **Հարկի գծով (ծախս)/ փոխհատուցում** | **Գումարը հարկումից հետո** |
| Հողի և շենքերի վերագնահատում | - | - | - | - | - | - |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն | -143,081 | 28,616 | -114,465 | -37,143 | 7,429 | -29,714 |
| Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն | - | - | - | - | - | - |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | **-143,081** | **28,616** | **-114,465** | **-37,143** | **7,429** | **-29,714** |

## 13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Կանխիկը դրամարկղում** | 3,282,469 | 3,475,849 |
| **Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում (առանց վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոցի)** | 28,070,437 | 31,179,930 |
| **Ժամկետային ավանդներ ՀՀ ԿԲ-ում** | 0 | 3,001,110 |
| **Նոստրո հաշիվներ այլ բանկերում** | | |
| - AA- վարկանիշով | 10,511,428 | 31,078,161 |
| - A- -ից A+ վարկանիշով | 276,861 | 200,360 |
| - Առանց վարկանիշ | - | - |
| **Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում** | 10,788,289 | 31,278,521 |
| **Դրամական միջոցների համարժեքներ** | | |
| Օվերնայթ տեղաբաշխումներ դրամական շուկայում | | |
| - AA- վարկանիշով | 515,399 | - |
| **Ընդամենը դրամական միջոցների համարժեքներ** | 515,399 | - |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում** | 42,656,594 | - |
| ՀՀ ԿԲ-ում վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց | 382,000 | 530,000 |
| Արժեզրկման գծով պահուստ | -78,036 | - |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում** | 42,960,558 | 69,465,410 |

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն: Վերը նշված վարկանիշները Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշներն են:

Նոստրո հաշիվները ներառում են պարտադիր նվազագույն պահուստը, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն: Այս ավանդների ելքագրումը սահմանափակված չէ, սակայն նվազագույն մնացորդը չպահպանելու դեպքում Բանկի նկատմամբ կարող են կիրառվել տուգանքներ:

## 14 Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր | | |
| - B+ վարկանիշով | 1,095,883 | 1,117,957 |
| **Ածանցյալ ֆինանսական գործիքներ** | | |
| Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր | | |
| - AA- վարկանիշով | 89,898 | 196,113 |
| **Ընդամենը շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ** | 1,185,781 | 1,314,070 |

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքները:

Բանկի ֆինանսական ակտիվները դասակարգված են Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշներով: Այն դեպքում, երբ Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշները առկա չեն, կիրառվել են Fitch IBCA's վարկանշային գործակալության վարկանիշները` օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համադրման աղյուսակը:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն ժամկետանց չեն:

## 15 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

| | 30 հունիսի 2018թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| **ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր** | | |
| - B+ վարկանիշով | 10,655,138 | 23,267,614 |
| **Այլ կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| - Առանց վարկանիշ | | - |
| **Ընդամենը պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | **10,655,138** | **23,267,614** |
| **Բաժնային գործիքներ – Չգնանշվող** | | |
| ԱՔՌՍ վարկային բյուրո | 19,140 | 19,140 |
| Արմենիան Քարդ | 12,143 | 12,143 |
| SWIFT | 822 | 849 |
| **Ընդամենը բաժնային գործիքներ – Չգնանշվող** | **32,105** | **32,132** |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | **10,687,243** | **23,299,746** |

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Բանկի ֆինանսական ակտիվները դասակարգված են Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշներով: Այն դեպքում, երբ Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշները առկա չեն, կիրառվել են Fitch IBCA's վարկանշային գործակալության վարկանիշները` օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համադրման աղյուսակը:

2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չվարկանշված կորպորատիվ պարտատոմսերն իրենցից ներկայացնում են տեղական ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերը:

### Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը ֆինանսական ծառայությունների ոլորտում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություններ դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Բացի այդ, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում է իրական արժեքների լայն տիրույթ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի հետ կապված անորոշությամբ:

## 16 Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Հայկական բանկեր | 7,627,865 | 3,285,315 |
| - AA- վարկանիշով | 24,170,744 | 7,268,919 |
| - Առանց վարկանիշ | 6,899 | 12,634 |
| Արժեզրկման գծով պահուստ | -1,786 | - |
| **Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխառություններ** | **31,803,722** | **10,566,868** |

Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերը և փոխառությունները արժեզրկված կամ ժամկետանց չեն: Վերը նշված վարկանիշները Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշներն են: Այն դեպքում, երբ Standard & Poor's վարկանշային գործակալության վարկանիշները առկա չեն, կիրառվել են Fitch IBCA's վարկանշային գործակալության վարկանիշները:

## 17 Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 60,245,737 | 56,269,712 |
| Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին | 29,507,417 | 27,772,189 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **89,753,154** | **84,041,901** |
| **Անհատներին տրված վարկեր** | | |
| Հիփոթեքային վարկեր | 14,475,455 | 14,013,030 |
| Վարկային քարտեր | 2,288,550 | 2,287,820 |
| Կառուցման վարկեր | 273,725 | 415,702 |
| Ավտոմեքենայի վարկեր | 144,646 | 167,540 |
| Սպառողական վարկեր | 2,200,948 | 2,513,515 |
| Անհատներին տրված այլ վարկեր | 2,911,684 | 2,602,549 |
| **Ընդամենը անհատներին տրված վարկեր** | **22,295,008** | **22,000,156** |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր** | **112,048,162** | **106,042,057** |
| Արժեզրկման գծով պահուստ | -9,423,285 | -10,610,810 |
| **Հաճախորդներին տրված զուտ վարկեր** | **102,624,877** | **95,431,247** |

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների դասերի 2018թ. հունիսի 30-ին ավարտված տարվա ընթացքում:

| | Վարկեր իրավաբանակա ն անձանց | Վարկեր անհատներին | Ընդամենը |
|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Մնացորդը տարեսկզբին** | **10,392,008** | **218,802** | **10,610,810** |
| ՖՀՄՍ 9-ի նախնական կիրառման հետ կապված փոփոխություններ | -1,177,365 | 690,789 | -486,576 |
| **Վերահաշվարկված մնացորդը տարեսկզբին** | **9,214,643** | **909,591** | **10,124,234** |
| Զուտ ծախս | 664,481 | -54,189 | 610,292 |
| Զուտ դուրսգրումներ | -1,419,955 | 40,493 | -1,379,462 |
| Արժեզրկված վարկերի զեղչի հակադարձում և վերաձևակերպված վարկերի գծով պահուստի ճշգրտում | 86,505 | 0 | 86,505 |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը | -18,103 | -181 | -18,284 |
| **Մնացորդը տարեվերջին** | **8,527,571** | **895,714** | **9,423,285** |

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների դասերի 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

| | Վարկեր իրավաբանակա ն անձանց | Վարկեր անհատներին | Ընդամենը |
|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Մնացորդը տարեսկզբին** | **11,300,623** | **189,686** | **11,490,309** |
| Զուտ ծախս | 13,607,384 | 200,543 | 13,807,927 |
| Զուտ դուրսգրումներ | -13,209,954 | -171,476 | -13,381,430 |
| Արժեզրկված վարկերի զեղչի հակադարձում և վերաձևակերպված վարկերի գծով պահուստի ճշգրտում | -1,476,875 | - | -1,476,875 |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը | 170,830 | 49 | 170,879 |
| **Մնացորդը տարեվերջին** | **10,392,008** | **218,802** | **10,610,810** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների որակական ցուցանիշների վերաբերյալ 2018թ. հունիսի 30-ի դրությամբ:

| | Իրավաբանական անձանց տրված վարկեր | Հիփոթեքային վարկեր | Վարկային քարտեր | Կառուցման վարկեր | Ավտոմեքենայի վարկեր | Սպառողական վարկեր | Անհատներին տրված այլ վարկեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 |
| *Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր* | | | | | | | | |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 44,316,889 | - | - | - | - | - | - | 44,316,889 |
| Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին | 16,736,442 | - | - | - | - | - | - | 16,736,442 |
| Անհատներին տրված վարկեր | - | 13,800,490 | 2,260,934 | 115,231 | 143,864 | 2,196,258 | 2,578,603 | 21,095,381 |
| **Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր** | **61,053,332** | **13,800,490** | **2,260,934** | **115,231** | **143,864** | **2,196,258** | **2,578,603** | **82,148,712** |
| *Ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր* | | | | | | | | |
| - մինչև 30 օր ժամկետանց | - | 82,407 | 18,534 | 472 | 781 | 2,306 | 9,832 | 114,332 |
| - 30-90 օր ժամկետանց | 0 | 51,570 | 6,117 | 0 | 0 | 1,492 | 60,334 | 119,513 |
| - 91-180 օր ժամկետանց | - | 251,185 | 717 | 0 | 0 | 876 | 18,296 | 271,074 |
| - 181-360 օր ժամկետանց | 0 | 58,114 | 2,249 | 158,022 | 0 | 6 | 0 | 218,391 |
| - ավելի քան 360 օր ժամկետանց | 2,718,531 | 231,689 | - | 0 | 0 | 9 | 244,619 | 3,194,848 |
| **Ընդամենը ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր** | **2,718,531** | **674,965** | **27,616** | **158,494** | **781** | **4,690** | **333,081** | **3,918,158** |
| *Ժամկետանց և արժեզրկված վարկեր (համախառն)* | | | | | | | | |
| - մինչև 30 օր ժամկետանց | 7,893,872 | - | - | - | - | - | - | 7,893,872 |
| - 30-90 օր ժամկետանց | - | - | - | - | - | - | - | - |
| - 91-180 օր ժամկետանց | 10,000 | - | - | - | - | - | - | 10,000 |
| - 181-360 օր ժամկետանց | 1,250,721 | - | - | - | - | - | - | 1,250,721 |
| - ավելի քան 360 օր ժամկետանց | 16,826,698 | - | - | - | - | - | - | 16,826,698 |
| **Ընդամենը ժամկետանց և արժեզրկված վարկեր (համախառն)** | **25,981,292** | - | - | - | - | - | - | **25,981,292** |
| **Արժեզրկման պահուստ** | (9,214,088) | (111,842) | (23,068) | (3,411) | (2,003) | (29,228) | (39,646) | (9,423,285) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր** | **80,539,066** | **14,363,613** | **2,265,483** | **270,315** | **142,643** | **2,171,720** | **2,872,039** | **102,624,878** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների որակական ցուցանիշների վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Իրավաբանական անձանց տրված վարկեր | Հիփոթեքային վարկեր | Վարկային քարտեր | Կառուցման վարկեր | Ավտոմեքենայի վարկեր | Սպառողական վարկեր | Անհատներին տրված այլ վարկեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 | AMD'000 |
| *Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր* | | | | | | | | |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 35,414,164 | - | - | - | - | - | - | 35,414,164 |
| Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին | 12,362,472 | - | - | - | - | - | - | 12,362,472 |
| Անհատներին տրված վարկեր | - | 13,201,044 | 2,262,817 | 257,702 | 167,540 | 2,506,852 | 2,293,981 | 20,689,936 |
| **Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր** | **47,776,636** | **13,201,044** | **2,262,817** | **257,702** | **167,540** | **2,506,852** | **2,293,981** | **68,466,572** |
| *Ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր* | | | | | | | | |
| - մինչև 30 օր ժամկետանց | 820,219 | 85,869 | 19,543 | 953 | - | 1,685 | 18,993 | 947,262 |
| - 30-90 օր ժամկետանց | - | 21,416 | 193 | - | - | 558 | - | 22,167 |
| - 91-180 օր ժամկետանց | - | 1,959 | 5,267 | - | - | 20 | - | 7,246 |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | - | - | - | - | 230,403 | 230,403 |
| - ավելի քան 360 օր ժամկետանց | 2,670,862 | 164,346 | - | - | - | - | 13,192 | 2,848,400 |
| **Ընդամենը ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր** | **3,491,081** | **273,590** | **25,003** | **953** | **-** | **2,263** | **262,588** | **4,055,478** |
| *Ժամկետանց և արժեզրկված վարկեր (համախառն)* | | | | | | | | |
| - մինչև 30 օր ժամկետանց | 11,869,907 | 38,445 | - | - | - | - | - | 11,908,352 |
| - 30-90 օր ժամկետանց | 989,496 | - | - | - | - | - | - | 989,496 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | - | 157,047 | - | - | - | 157,047 |
| - 181-360 օր ժամկետանց | 2,264,705 | 42,426 | - | - | - | - | - | 2,307,131 |
| - ավելի քան 360 օր ժամկետանց | 17,650,076 | 457,525 | - | - | - | 4,400 | 45,980 | 18,157,981 |
| **Ընդամենը ժամկետանց և արժեզրկված վարկեր (համախառն)** | **32,774,184** | **538,396** | **-** | **157,047** | **-** | **4,400** | **45,980** | **33,520,007** |
| **Արժեզրկման պահուստ** | -10,392,005 | -166,789 | -20,367 | -7,166 | -2,860 | -9,616 | -12,007 | -10,610,810 |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր** | **73,649,896** | **13,846,241** | **2,267,453** | **408,536** | **164,680** | **2,503,899** | **2,590,542** | **95,431,247** |

Բոլոր ոչ ժամկետանց վարկերը ունեն միևնույն վարկային վարկանիշը` համաձայն Բանկի ներքին քաղաքականությունների, և չեն դրսևորել վարկանշի նվազման նշաններ 2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

**(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները**

***(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր***

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է արժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- Վարկային պայմանագրի ժամկետանց վճարները:
- Վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը:
- Տնտեսական միջավայրի էական վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

IFRS 9 սկզբունքի համաձայն, ֆինանսական ակտիվները տեղաբաշխվում են 3 ենթադասերի: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի դեպքում կիրառվում է կոլեկտիվ մեթոդը, որը արտացոլում է կորուստի հավանականությունը: Զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը կիրառվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի պարագայում, որոնք տեղաբաշխված են 3 -րդ ենթախմբում:

***(ii) Անհատներին տրված վարկեր***

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Բանկը կիրառում է փոքր պորտֆելի մեթոդը բոլոր պորտֆելների դեպքում, բացառությամբ Կրեդիտ քարտերի պորտֆելի: Վերջինիս դեպքում կիրառվում է Համախառն Ռիսկի մեթոդը: Պորտֆելները դասակարգվում են 3 ենթախմբի ըստ ժամկետանց օրերի և համապատասխան կորստի դրույք է կիրառվում յուրաքանչյուր ենթախմբի պարագայում:

## (գ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեություն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Առևտուր | 34,526,309 | 26,774,573 |
| Շինարարություն | 5,454,405 | 7,292,929 |
| Սննդի և խմիչքի արտադրություն | 16,106,220 | 17,423,484 |
| Սպասարկման ոլորտ | 14,497,256 | 10,344,031 |
| Էներգետիկայի ոլորտ | 3,723,347 | 3,738,103 |
| Արդյունաբերություն | 6,826,907 | 6,661,754 |
| Գյուղատնտեսություն | 1,954,105 | 3,381,459 |
| Ֆինանսական ոլորտ | 1,981,443 | 2,092,333 |
| Քիմիական արդյունաբերություն | 108,001 | - |
| Այլ | 4,575,161 | 6,333,235 |
| Անհատներին տրված վարկեր | 22,295,008 | 22,000,156 |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր (համախառն)** | **112,048,162** | **106,042,057** |
| Արժեզրկման գծով պահուստ | -9,423,285 | -10,610,810 |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր (զուտ)** | **102,624,877** | **95,431,247** |

# 18 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Հող և շենքեր | Վարձակալված գույքի բարելավումներ | Փոխադրամիջոցներ | Համակարգչ. սարքավորում. | Ոչ նյութական ակտիվներ | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք** | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.** | 1,499,918 | 2,825,426 | 183,363 | 1,787,221 | 4,349,595 | 1,392,150 | 12,037,673 |
| Ավելացումներ | - | - | - | 413,403 | 1,668 | 74,511 | 489,581 |
| Օտարումներ/ դուրսգրումներ | - | - | - | (22,658) | - | (4,990) | (27,647) |
| **Մնացորդը առ 30 հունիսի 2018թ.** | 1,499,918 | 2,825,426 | 183,363 | 2,177,966 | 4,351,263 | 1,461,671 | 12,499,607 |
| | | | | | | | |
| **Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ** | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.** | (202,812) | (2,580,221) | (116,431) | (1,582,347) | (3,118,220) | (1,301,658) | (8,901,689) |
| Մաշվածության և ամորտիզացիայի ծախս | (50,709) | (34,070) | (11,366) | (52,893) | (275,719) | (27,526) | (452,282) |
| Օտարումներ/ դուրսգրումներ | - | - | - | 22,577 | - | 4,990 | 27,567 |
| **Մնացորդը առ 30 հունիսի 2018թ.** | (253,521) | (2,614,291) | (127,797) | (1,612,663) | (3,393,939) | (1,324,194) | (9,326,404) |
| | | | | | | | |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | | |
| **Առ 30 հունիսի 2018թ.** | 1,246,397 | 211,135 | 55,566 | 565,303 | 957,324 | 137,477 | 3,173,203 |
| | | | | | | | |
| **Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք** | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.** | 1,499,918 | 2,981,598 | 183,774 | 1,675,959 | 3,880,939 | 1,397,898 | 11,620,086 |
| Ավելացումներ | - | 14,462 | 16,800 | 121,386 | 479,183 | 19,138 | 650,969 |
| Օտարումներ/ դուրսգրումներ | - | (170,634) | (17,211) | (10,124) | (10,527) | (24,886) | (233,382) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.** | 1,499,918 | 2,825,426 | 183,363 | 1,787,221 | 4,349,595 | 1,392,150 | 12,037,673 |
| | | | | | | | |
| **Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ** | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.** | (101,394) | (2,648,801) | (112,867) | (1,486,756) | (2,570,726) | (1,281,217) | (8,201,761) |
| Մաշվածության և ամորտիզացիայի ծախս | (101,418) | (102,054) | (20,775) | (105,715) | (558,021) | (45,327) | (933,310) |
| Օտարումներ/ դուրսգրումներ | - | 170,634 | 17,211 | 10,124 | 10,527 | 24,886 | 233,382 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.** | (202,812) | (2,580,221) | (116,431) | (1,582,347) | (3,118,220) | (1,301,658) | (8,901,689) |
| | | | | | | | |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2017թ.** | 1,297,106 | 245,205 | 66,932 | 204,874 | 1,231,375 | 90,492 | 3,135,984 |

## 19 Այլ ակտիվներ

| | 30 հունիսի 2018թ. hազ. դրամ | 31 դեկտեմբերի 2017թ. hազ. դրամ |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական ակտիվներ** | | |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 1,101,735 | 1,855,092 |
| Արժեզրկման գծով պահուստ | -22,735 | - |
| Հաշվեգրված կոմիսիոն գումարներ | 131,366 | 504,215 |
| Այլ | 323,082 | 454,391 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **1,533,448** | **2,813,698** |
| **Այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Կանխավճարներ | 600,275 | 52,986 |
| Նյութեր և պաշարներ | 36,867 | 45,393 |
| Բռնագանձված գրավ | 1,869,585 | 1,355,278 |
| **Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ** | **2,506,727** | **1,453,657** |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **4,040,175** | **4,267,355** |

## 20 Բանկերի ավանդներ և մնացորդներ

| | 30 հունիսի 2018թ. hազ. դրամ | 31 դեկտեմբերի 2017թ. hազ. դրամ |
|---|---|---|
| Այլ բանկերի ընթացիկ հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ | 499,026 | 618,931 |
| Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամներից ստացված վարկեր | 5,633,091 | 5,816,459 |
| ՀՀ բանկերից ստացված վարկեր | 2,323,814 | 375,588 |
| Ֆինանսական կազմակերպություններ | 60,956 | 73,272 |
| **Ընդամենը բանկերի ավանդներ և մնացորդներ** | **8,516,887** | **6,884,250** |

## 21 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

| | 30 հունիսի 2018թ. hազ. դրամ | 31 դեկտեմբերի 2017թ. hազ. դրամ |
|---|---|---|
| **Ընթացիկ հաշիվներ** | | |
| - Անհատներ | 44,108,566 | 40,918,548 |
| - Իրավաբանական անձիք | 32,064,952 | 34,508,917 |
| **Ժամկետային ավանդներ** | | |
| - Անհատներ | 68,518,825 | 72,753,233 |
| - Իրավաբանական անձիք | 9,916,059 | 10,392,097 |
| Այլ | 6,820 | 6,696 |
| **Ընդամենը հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ** | **154,615,222** | **158,579,491** |

2018թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկում տեղաբաշխված հաճախորդների ավանդների մնացորդները կազմում են 469,417 հազար դրամ (2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,024,402 հազար դրամ), որոնք ծառայում էին որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և չճանաչված վարկային գործիքների համար:

## 22 Այլ պարտավորություններ

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Այլ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Ակրեդիտիվների գծով վճարվելիք գումարներ | 1,101,735 | 1,855,092 |
| Արժեզրկման գծով պահուստ | 57,278 | - |
| Էյչ-Էս-Բի-Սի Խմբին վճարվելիք գումարներ | 1,284,100 | 691,475 |
| Հաշվեգրված ծախսեր | 67,680 | 117,642 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արտարժույթի առք ու վաճառքի ածանցյալ պայմանագրեր | 1,165 | 6,489 |
| Այլ | 134,276 | 333,396 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **2,646,233** | **3,004,094** |
| **Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Աշխատակիցների գծով հաշվեգրված ծախսեր | 453,805 | 833,540 |
| Հետաձգված եկամուտներ | 165,618 | 301,769 |
| Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին վճարվելիք գումարներ | 59,722 | 59,742 |
| Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով | 158,240 | - |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **837,385** | **1,195,051** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **3,483,618** | **4,199,145** |

## 23 Բաժնետիրական կապիտալ

### (ա) Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 609,400 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 30.25 հազար դրամ արժեքով (2017թ.-ին՝ 609,400՝ յուրաքանչյուրը 30.25 հազար դրամ արժեքով):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2018թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել (2017թ.-ին շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել):

## 24 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

### (ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխությունները արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) և Ռիսկերի կառավարման ժողովի (ՌԿԺ) կողմից:

### (բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության չափն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում են:

Բանկի շուկայական ռիսկի կառավարման քաղաքականությունը համապատասխանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին:

### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ` տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում հանգեցնել վնասների:

#### *Միջին տոկոսադրույքներ*

Բանկը վերահսկում է իր ֆինանսական գործիքների տոկոսադրույքները: Ստորև բերված աղյուսակում ամփոփվում են արդյունավետ տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արժեթղթերի համար տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են շուկայական արժենշումների վրա հիմնված մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի եկամտաբերությունը.

| | 30 հունիսի 2018թ. | | | 31 դեկտեմբերի 2017թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
| | Դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ | Դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | - | 6.2 | 4.6 | - | - |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 10.6 | - | - | 10.6 | - | - |
| Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 7.2 | - | - | 7.9 | - | - |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 6.2 | 2.1 | - | 6.4 | 1.3 | - |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 11.8 | 7.1 | 6.9 | 12.3 | 8.0 | 7.3 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | 6.0 | - | - | 0.0 | 0.0 | - |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 6.8 | - | 1.6 | 9.3 | - | 1.6 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 2.3 | 1.0 | 1.5 | 2.3 | 0.9 | 0.6 |
| - Ժամկետային ավանդներ | 8.7 | 3.3 | 1.1 | 9.0 | 4.0 | 1.3 |

### *(ii) Արտարժույթի ռիսկ*

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2018թ. հունիսի 30-ի դրությամբ.

| ԱԿՏԻՎՆԵՐ | Դրամ<br>հազ. դրամ | ԱՄՆ դոլար<br>հազ. դրամ | Եվրո<br>հազ. դրամ | Այլ արտարժույթ<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 24,401,089 | 4,705,301 | 11,131,764 | 2,722,404 | 42,960,558 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 1,097,341 | 88,371 | 0 | 69 | 1,185,781 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 10,686,421 | 0 | 822 | 0 | 10,687,243 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 6,661,839 | 25,113,892 | 24,177 | 3,814 | 31,803,722 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 31,096,711 | 64,439,729 | 7,088,437 | 0 | 102,624,877 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | 8,120,274 | 0 | 0 | 0 | 8,120,274 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 208,011 | 843,214 | 474,079 | 8144 | 1,533,448 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **82,271,686** | **95,190,507** | **18,719,279** | **2,734,431** | **198,915,903** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 2,883,796 | 0 | 5,633,091 | 0 | 8,516,887 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 43,606,245 | 96,227,615 | 12,749,692 | 2,031,670 | 154,615,222 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | 22,128 | 0 | 0 | 0 | 22,128 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 517,145 | 849,496 | 545,275 | 734,317 | 2,646,233 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **47,029,314** | **97,077,111** | **18,928,058** | **2,765,987** | **165,800,470** |
| **Զուտ դիրքը առ 30 հունիսի 2018թ.** | **35,242,372** | **-1,886,604** | **-208,779** | **-31,556** | **33,115,433** |
| **Ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների և արտարժույթի առք ու վաճառքի կանոնավոր պայմանագրերի ազդեցությունը** | **-2,429,736** | **2,472,799** | **0** | **-43,063** | **0** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| ԱԿՏԻՎՆԵՐ | Դրամ<br>հազ. դրամ | ԱՄՆ դոլար<br>հազ. դրամ | Եվրո<br>հազ. դրամ | Այլ արտարժույթ<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 31,627,408 | 30,333,957 | 5,621,852 | 1,882,193 | 69,465,410 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 1,118,124 | 195,562 | 384 | - | 1,314,070 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 23,298,898 | - | 848 | - | 23,299,746 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 3,285,315 | 7,266,319 | 8,685 | 6,549 | 10,566,868 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 26,795,911 | 56,770,231 | 11,865,105 | - | 95,431,247 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 410,539 | 1,527,128 | 876,031 | - | 2,813,698 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **86,536,195** | **96,093,197** | **18,372,905** | **1,888,742** | **202,891,039** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 1,067,791 | - | 5,816,459 | - | 6,884,250 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 42,918,181 | 102,414,762 | 11,739,391 | 1,507,157 | 158,579,491 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 803,081 | 1,054,642 | 909,962 | 236,409 | 3,004,094 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **44,789,053** | **103,469,404** | **18,465,812** | **1,743,566** | **168,467,835** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2017թ.** | **41,747,142** | **-7,376,207** | **-92,907** | **145,176** | **34,423,204** |
| **Ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների և արտարժույթի առք ու վաճառքի կանոնավոր պայմանագրերի ազդեցությունը** | **-7,884,390** | **7,922,350** | **5** | **-37,965** | **-** |

2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամի փոխարժեքի արժևորումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | 30 հունիսի 2018թ. | | 31 դեկտեմբերի 2017թ. | |
|---|---|---|---|---|
| | Շահույթ կամ վնաս հազ. դրամ | Սեփական կապիտալ հազ. դրամ | Շահույթ կամ վնաս հազ. դրամ | Սեփական կապիտալ հազ. դրամ |
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժեզրկում դրամի նկատմամբ | -58,619 | -58,619 | -54,614 | -54,614 |
| Եվրոյի փոխարժեքի 10% արժեզրկում դրամի նկատմամբ | 20,878 | 20,878 | 9,290 | 9,290 |

2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամի փոխարժեքի արժեզրկումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցությունը նշված արտարժույթների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Բանկի վարկային քաղաքականությունը համապատասխանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին:

Վարկային քաղաքականությունը սահմանում է.

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձիք և անհատներ) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող վարկային մենեջերների կողմից՝ CARM (Վարկերի հաստատման և գնահատման համակարգ) համակարգի միջոցով: Այնուհետև, դիմումները փոխանցվում են Առևտրավարկային վարչության տնօրենի վերանայմանը, Ռիսկերի կառավարման գծով գլխավոր տնօրենի կամ Ռեգիոնալ վարկավորման և ռիսկերի թիմի հաստատմանը՝ հաստատված սահմանաչափերի շրջանակներում: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների համակարգված վերլուծությունների վրա: Վարկային ծառայություններին վերաբերող բոլոր իրավաբանական պայմանագրերը պատրաստվում և փոփոխվում են CARM համակարգով հաստատված վարկային դիմումների հիման վրա:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա:

Անհատների կողմից ներկայացվող վարկային դիմումները ուսումնասիրվում են Անհատական վարկերի բաժնի կողմից՝ Վարչության կողմից հաստատված ՄԲԾ դեպարտամենտի (RBWM) Ֆիզիկական անձանց վարկավորման քաղաքականությամբ (RRPs) սահմանված չափանիշների հետ համապատասխանությունը ստուգելու միջոցով:

Բանկը վերահսկում է վարկային ռիսկի կենտրոնացումն ըստ արդյունաբերության ճյուղերի և աշխարհագրական դիրքի: Վարկի յուրաքանչյուր տեսակի համար Բանկը սահմանում է ակտիվների առավելագույն մակարդակը, որը կանոնավոր հիմունքով վերահսկվում է:

Վարկային ռիսկի առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

| | **30 հունիսի 2018թ. հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2017թ. հազ. դրամ** |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 39,678,089 | 65,989,561 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 1,185,781 | 1,314,070 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ակտիվներ | 10,655,138 | 23,267,614 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 31,803,722 | 10,566,868 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 102,624,877 | 95,431,247 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | 8,120,274 | - |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 1,533,448 | 2,813,698 |
| Վարկավորման պարտավորվածություններ և երաշխիքներ | 18,599,242 | 27,634,355 |
| **Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը** | **214,200,571** | **227,017,413** |

Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերը և փոխառություններն ապահովված են անշարժ գույքի գրավով, ակտիվների նկատմամբ այլ գրանցված գրավով և երաշխիքներով: Անշարժ գույք հանդիսացող գրավի ընթացիկ շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է Բանկի կողմից հաստատված անկախ գնահատող ընկերությունների կողմից, պաշարների և նմանատիպ միավորների արժեքը գնահատվում է հաշիվ-ապրանքագրերի արժեքների հիման վրա, և շուկայական գների բացասական շարժի դեպքում վարկառուից կարող է պահանջվել լրացուցիչ արժեքների գրավադրում:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործարքների մաս:

Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

**Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք`

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա` անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե` ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի` որպես փոխառության տրամադրման գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի` որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. հունիսի 30-ի դրությամբ:

| հազ. դրամ<br><br>Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ | Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորությա ն համախառն գումար | Հաշվանցված ճանաչված ֆինանսական պարտավորությա ն/ ակտիվի համախառն գումար | Ֆինանսական ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար | Չհաշվանցվա ծ գումարներ<br><br>Ֆինանսական գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ) | Զուտ գումար |
|---|---|---|---|---|---|
| Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր (ներառված հաճախորդներին տրված վարկերի կազմում) | 5,239,571 | - | 5,239,571 | 5,239,571 | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **5,239,571** | **-** | **5,239,571** | **5,239,571** | **-** |
| Վաճառքի և հետգնման պայմանագրեր | - | - | - | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **-** | **-** | **-** | **-** | **-** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ<br><br>Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ | Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորությա ն համախառն գումար | Հաշվանցված ճանաչված ֆինանսական պարտավորությա ն/ ակտիվի համախառն գումար | Ֆինանսական ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար | Չհաշվանցվա ծ գումարներ<br><br>Ֆինանսական գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ) | Զուտ գումար |
|---|---|---|---|---|---|
| Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր (ներառված հաճախորդներին տրված վարկերի կազմում) | 3,972,333 | - | 3,972,333 | -3,972,333 | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **3,972,333** | **-** | **3,972,333** | **-3,972,333** | **-** |
| Վաճառքի և հետգնման պայմանագրեր | - | - | - | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **-** | **-** | **-** | **-** | **-** |

### (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը մշակվել է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի քաղաքականության և տեղական կանոնակարգերի համաձայն: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿԿ-ի և Խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է հիմնական իրավաբանական անձ և անհատ հաճախորդների ավանդները, թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

· դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
· ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
· պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
· պարտքերի ֆինանսավորման ծրագրերի վարում,
· բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
· իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
· օրենսդրության պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Երկարաժամկետ կամ կառուցվածքային իրացվելիության և ֆինանսավորման ռիսկերի կառավարումը ԱՊԿԿ-ի պատասխանատվությունն է: Հաշվեկշռի կառավարումը հանդիսանում է ԱՊԿԿ-ի հիմնական գործառույթներից մեկը, որը նպատակ է հետապնդում խթանել շահութաբերությունը և բարձրացնել կապիտալի ու ֆինանսավորման աղբյուրների օգտագործման արդյունավետությունը՝ ռիսկով կշռված ակտիվների գծով եկամտաբերության բարելավման, ռիսկերի վերահսկման և դրանց շրջահայաց կառավարման շնորհիվ:

Կարճաժամկետ կամ գործառնական իրացվելիության ռիսկի կառավարումը Գանձապետարանի պատասխանատվությունն է: Գանձապետարանը պարտավոր է ձևավորել կարճաժամկետ իրացվելի ակտիվների բավարար պորտֆել, որը հիմնականում բաղկացած է կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերում տեղաբաշխված միջոցներից և այլ միջբանկային գործիքներից: Բոլոր նշանակալի գործարքները, որոնք կարող են Բանկի իրացվելիության վրա ազդեցություն ունենալ, նախօրոք պետք է համաձայնեցվեն Գանձապետարանի հետ համապատասխան ստորաբաժանումների կողմից:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգված են ըստ մարման ժամկետների: Ստորև ներկայացված են այս ավանդների գումարները՝ ըստ մարման ժամկետների:

մինչև 1 ամիս՝ 7,884,292 հազար դրամ (2017թ.-ին՝ 7,610,122 հազար դրամ),
1-ից 3 ամիս՝ 9,500,029 հազար դրամ (2017թ.-ին՝ 9,261,651 հազար դրամ),
3-ից 12 ամիս՝ 36,815,919 հազար դրամ (2017թ.-ին՝ 35,931,555 հազար դրամ),
1-ից 5 տարի՝ 12,756,129 հազար դրամ (2017թ.-ին՝ 18,363,768 հազար դրամ),
ավելի քան 5 տարի՝ 1,018,782 հազար դրամ (2017թ.-ին՝ 836,966 հազար դրամ):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. հունիսի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների.

| **հազ. դրամ** | **Ցպահանջ և մինչև 1 ամիս** | **1-ից 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **1-ից 5 տարի** | **Ավելի քան 5 տարի** | **Անժամկետ** | **Ժամկետանց** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 42,960,558 | - | - | - | - | - | - | 42,960,558 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 1,112,773 | 44,252 | 28,756 | - | - | - | - | 1,185,781 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 1,679,453 | 1,992,787 | 6,766,361 | 112,162 | 104,375 | 32,105 | - | 10,687,243 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 31,803,722 | - | - | - | - | - | - | 31,803,722 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 5,333,088 | 8,007,851 | 28,536,194 | 38,505,699 | 9,384,160 | - | 12,857,886 | 102,624,877 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | 1,799,468 | 857,295 | 5,463,511 | - | - | - | - | 8,120,274 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | - | - | - | - | - | - | - | - |
| Հետաձգված հարկային ակտիվներ | - | - | - | - | - | 1,142,385 | - | 1,142,385 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 3,173,203 | - | 3,173,203 |
| Այլ ակտիվներ | 542,322 | 338,227 | 2,654,649 | 27,987 | 12,244 | 464,746 | - | 4,040,175 |
| **Ընդամենը ակտիվներ** | **85,231,385** | **11,240,411** | **43,449,471** | **38,645,848** | **9,500,779** | **4,812,439** | **12,857,886** | **205,738,219** |
| | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 2,543,175 | 5,635,629 | 133,775 | 204,307 | - | - | - | 8,516,887 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 84,653,737 | 13,771,319 | 42,227,888 | 12,940,144 | 1,022,135 | - | - | 154,615,222 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | - | - | 22,128 | - | - | - | - | 22,128 |
| Այլ պարտավորություններ | 1,831,765 | 334,048 | 1,264,541 | 53,263 | - | - | - | 3,483,618 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **89,028,677** | **19,740,997** | **43,648,332** | **13,197,714** | **1,022,135** | 0 | 0 | **166,637,854** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2017թ.** | **-3,797,293** | **-8,500,586** | **-198,861** | **25,448,135** | **8,478,644** | **4,812,439** | **12,857,886** | **39,100,364** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների.

| **հազ. դրամ** | **Ցպահանջ և մինչև 1 ամիս** | **1-ից 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **1-ից 5 տարի** | **Ավելի քան 5 տարի** | **Անժամկետ** | **Ժամկետանց** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 69,465,410 | - | - | - | - | - | - | 69,465,410 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 1,128,052 | 25,834 | 160,184 | - | - | - | - | 1,314,070 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 3,015,455 | 4,533,532 | 11,640,825 | 3,974,280 | 103,522 | 32,132 | | 23,299,746 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 10,566,868 | - | - | - | - | - | - | 10,566,868 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 5,587,465 | 6,290,499 | 25,193,822 | 39,032,345 | 6,168,705 | | 13,158,411 | 95,431,247 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | - | - | 16,325 | - | - | - | - | 16,325 |
| Հետաձգված հարկային ակտիվ | - | - | - | - | - | 1,152,217 | - | 1,152,217 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 3,135,984 | - | 3,135,984 |
| Այլ ակտիվներ | 681,554 | 356,332 | 2,543,146 | 258,145 | - | 49,038 | 379,140 | 4,267,355 |
| **Ընդամենը ակտիվներ** | **90,444,804** | **11,206,197** | **39,554,302** | **43,264,770** | **6,272,227** | **4,369,371** | **13,537,551** | **208,649,222** |
| | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 662,125 | 19,773 | 5,913,322 | 289,030 | - | - | - | 6,884,250 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 84,001,795 | 10,057,447 | 43,962,546 | 19,717,326 | 840,377 | - | - | 158,579,491 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | - | - | - | - | - | - | - | 0 |
| Այլ պարտավորություններ | 1,331,542 | 394,273 | 2,129,926 | 343,404 | - | - | - | 4,199,145 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **85,995,462** | **10,471,493** | **52,005,794** | **20,349,760** | **840,377** | **-** | **-** | **169,662,886** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2017թ.** | **4,449,342** | **734,704** | **-12,451,492** | **22,915,010** | **5,431,850** | **4,369,371** | **13,537,551** | **38,986,336** |

Ղեկավարությունը կարծում է, որ չնայած հաճախորդների հաշիվների մի զգալի մասը ընթացիկ են, այդ ավանդների դիվերսիֆիկացիան ըստ ավանդատուների քանակի և տեսակի, ինչպես նաև Բանկի անցյալի փորձը վկայում են այն մասին, որ հաճախորդների ընթացիկ հաշիվները Բանկի համար ապահովում են երկարաժամկետ և կայուն ֆինանսավորման աղբյուր:

Իրացվելիության և ֆինանսավորման ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական գործիքներն են համապատասխանաբար՝ գործառնական դրամական հոսքերի նախագծումը և վարկերի ու կայուն ավանդների հարաբերակցության գործակիցը, որոնք հաշվարկվում և վերահսկվում են օրական կտրվածքով: Բանկը իրացվելիության և ֆինանսավորման ռիսկը կառավարում է Խորհրդի կողմից հաստատված Բանկի ռիսկի ախորժակի սահմաններում : ՀՀ ԿԲ սահմանում և վերահսկում է բանկերի համար նախատեսված իրացվելիության պահանջները: Ըստ ներկա պահանջների՝ բանկերը պետք է ապահովեն բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների միջև հարաբերակցության և բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցության նախանշված նվազագույն մակարդակից բարձր մակարդակ: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները և պետական գանձապետական պարտատոմսերը, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումն այլ կերպ սահմանափակված չէ: 2018թ.-ի հունիսի 30-ի դրությամբ դրանց նվազագույն մակարդակները համապատասխանաբար կազմել են՝ 15 և 60 տոկոս: 2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ժամանակահատվածի ողջ ընթացքում Բանկի իրացվելիության ցուցանիշները համապատասխանում էին սահմանված մակարդակին:

Ստորև ներկայացված են նշված ՀՀ ԿԲ կողմից սահմանված չափանիշներով հաշվարկված իրացվելիության հարաբերակցությունները հաշվետու ամսաթվի դրությամբ.

| | **30 հունիսի 2018թ.** | **31 դեկտեմբերի 2017թ.** |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը | 26% | 45% |
| Բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը | 71% | 125% |

Բանկն իրականացնում է սթրես-թեստավորում՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել ծայրահեղ շուկայական պայմաններ ներառող սցենարներ: Սթրես թեսթերի արդյունքներն ուսումնասիրվում են ԱՊԿԿ-ի կողմից եռամսյակային կտրվածքով և Խորհրդի կողմից՝ տարեկան կտրվածքով: Բանկում առկա է նաև արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագիր, որը սահմանում է վաղ ահազանգման ցուցանիշները, ճգնաժամային կառավարման թիմը, պարտականությունները, հրատապ իրացվելիության աղբյուրները, ինչպես նաև ճգնաժամային սցենարներն ու Բանկի կողմից կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումների ձեռնարկումը:

## 25 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի մեծության նկատմամբ պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկավորող կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2018թ.հունիսի 30-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ժամանակահատվածի ողջ ընթացքում Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Կապիտալի համարժեքության ցուցանիշը գնահատելու նպատակով կանոնավոր հիմունքով իրականացվում են սթրես թեսթեր՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սթրես թեսթերի արդյունքներն ուսումնասիրվում են ԱՊԿԿ-ի կողմից եռամսյակային կտրվածքով և Խորհրդի կողմից՝ տարեկան կտրվածքով:

## 26 Պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ և սովորաբար տրամադրվում են մինչև հինգ տարի ժամկետով:

Վարկավորման պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը ամբողջովին չիրականացնեն ստանձնած պարտավորությունները:

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ | 7,538,180 | 13,602,520 |
| Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ | 4,427,270 | 4,580,498 |
| Գործունեության երաշխիքներ | 2,361,892 | 2,090,964 |
| Չօգտագործված օվերդրաֆտներ | 3,919,521 | 6,574,914 |
| Ակրեդիտիվներ | 327,664 | 47,811 |
| Ֆինանսական երաշխիքներ | 0 | 234,205 |
| Այլ պարտավորվածություններ | 24,715 | 503,443 |
| **Ընդամենը պարտավորվածություններ** | **18,599,242** | **27,634,355** |

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

## 27 Գործառնական վարձակալություն

2018թ. հունիսի 30-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Մինչև մեկ տարի ժամկետով | 456,937 | 442,325 |
| Մեկից հինգ տարի ժամկետով | 1,238,490 | 1,356,820 |
| Ավելի քան հինգ տարի ժամկետով | 0 | 27 |
| **Ընդամենը գործառնական վարձակալություն** | **1,695,427** | **1,799,172** |

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարների չափը սովորաբար վերանայվում է տարեկան կտրվածքով՝ շուկայի միտումներն արտացոլելու նպատակով: Այս վարձակալություններից ոչ մեկը պայմանական վարձավճար չի ներառում:

## 28 Պայմանական դեպքեր

### (ա) Դատական վարույթներ

Բանկի ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

### (բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի հարկային համակարգը շարունակում է զարգանալ և բնորոշվում է օրենսդրության և պաշտոնական պարզաբանումների հաճախակի փոփոխություններով, դատարանի վճիռներով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են պարզաբանումներ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային տարին ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Բանկի ֆինանսական վիճակի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 29 Պահառուական գործունեություն

Բանկն իր հաճախորդներին մատուցում է պահառուական ծառայություններ, որոնց շրջանակներում նրան ի պահ են տրվում հաճախորդների արժեթղթերը: Այդ ծառայությունների դիմաց Բանկը ստանում է կոմիսիոն վճարների տեսքով եկամուտ: Այս արժեթղթերը Բանկի ակտիվներ չեն հանդիսանում և, այդ իսկ պատճառով, չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## 30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Գործարքներ Խորհրդի և Հիմնական ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը.

| | 30 հունիսի 2018թ. | 30 հունիսի 2017թ. |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Ընդհանուր վարձատրություն | 499,395 | 464,762 |
| Այլ հատուցումներ | 50,332 | 41,996 |
| **Ընդամենը ընդհանուր վարձատրություն և հատուցումներ** | **549,727** | **506,759** |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ | 0 | 2,820 |
| **Ընդամենը հատուցումներ** | **549,727** | **509,579** |

Գործարքների մնացորդները և տոկոսադրույքները հետևյալն են.

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք՝ 4.0 - 18.0%) | 433,088 | 567,426 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ (պայմանագրային տոկոսադրույք՝ 0 - 7.0%) | 400,975 | 498,920 |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության մեջ ներառված գումարները հետևյալն են.

| | 30 հունիսի 2018թ. | 30 հունիսի 2018թ. |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| **Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | |
| Տոկոսային եկամուտ | 14,414 | 16,273 |
| Տոկոսային ծախս | (9,460) | (3,790) |

## (բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ փոխկապակցված կողմերը ներառում են Բանկի վերջնական վերահսկող ընկերության ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները և հիմնական ղեկավար անձնակազմի հետ փոխկապակցված այլ կողմերը: Գործարքների մնացորդները և դրանց տոկոսադրույքները հետևյալն են.

| | 30 հունիսի 2018թ. հազ. դրամ | | 31 դեկտեմբերի 2017թ. հազ. դրամ | |
|---|---|---|---|---|
| | Ընդհանուր վերահսկողու-թյան ներքո գտնվող կազմակեր-պություններ | Այլ կապակցված կողմեր | Ընդհանուր վերահսկողու-թյան ներքո գտնվող կազմակեր-պություններ | Այլ կապակցված կողմեր |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (պայմանագրային տոկոսադրույք՝ 0.0%-6.0%) | 11,038,044 | | 31,092,993 | |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք՝ 2.0%-6.0%) | 24,138,481 | | 7,262,811 | |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք՝ 6.3% - 18.0%) | | 118,210 | | 208,872 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 89,898 | | 196,113.34 | |
| Այլ ակտիվներ | 39,159 | | 18,742 | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ (պայմանագրային տոկոսադրույք՝ 0.0% – 1.6%) | 6,132,214 | | 6,435,971.05 | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ (պայմանագրային տոկոսադրույք՝ 0.0% –8.5%) | | 201,992 | | 317,492 |
| Այլ պարտավորություններ | 2,453,765 | | 2,466,736 | |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության մեջ ներառված գումարները հետևյալն են.

| | 30 հունիսի 2018թ. հազ. դրամ | | 30 հունիսի 2017թ. հազ. դրամ | |
|---|---|---|---|---|
| | Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպու-թյուններ | Այլ կապակցված կողմեր | Ընդհանուր վերահսկողությ ան ներքո գտնվող կազմակերպու-թյուններ | Այլ կապակցված կողմեր |
| Տոկոսային եկամուտ | 243,172 | 4,622 | 33,019 | 12,381 |
| Տոկոսային ծախս | (44,652) | (116) | (69,971) | (4,556) |
| Օգուտ արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրերից | (104,558) | (14,629) | (79,332) | - |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս | (24,814) | (2,258) | (17,029) | - |
| Այլ գործառնական եկամուտ | 20,589 | 1,695 | 5,546 | 2,159 |
| Այլ վարչական և գործառնական ծախսեր | (1,095,565) | - | (722,311) | - |

Փոխկապակցված կողմերի հետ կապված այլ իրավունքներն ու պարտականությունները հետևյալն են.

| | 30 հունիսի 2018թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| | Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ |
| Խմբի համար թողարկված երաշխիքներ տարեվերջին | 482,240 | 870,150 |
| Չօգտագործված վարկային գծեր | | - |
| Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր | 3,451,098 | 10,136,239 |

## 31 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

### (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները 2018թ. հունիսի 30-ի դրությամբ.

| հազ. դրամ | Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող | Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող | Ամորտիզացված արժեքով հաշվառվող | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | - | 42,960,558 | 42,960,558 |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | 1,185,781 | - | - | 1,185,781 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | - | 10,687,243 | - | 10,687,243 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | - | - | 31,803,722 | 31,803,722 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | - | - | 102,624,877 | 102,624,877 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | - | - | 8,120,274 | 8,120,274 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | - | 1,533,448 | 1,533,448 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **1,185,781** | **10,687,243** | **144,082,321** | **198,915,903** |
| | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | - | - | 8,516,887 | 8,516,887 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | - | - | 154,615,222 | 154,615,222 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 1,165 | - | 2,645,068 | 2,646,233 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **1,165** | **0** | **165,777,177** | **165,778,342** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| հազ. դրամ | Առևտրական նպատակներով պահվող | Վարկեր և դեբիտորական պարտքեր | Վաճառքի համար մատչելի գործիքներ | Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ գործիքներ | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 69,465,410 | - | - | 69,465,410 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 1,314,070 | - | - | - | 1,314,070 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | - | - | 23,299,746 | - | 23,299,746 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | - | 10,566,868 | - | - | 10,566,868 |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | 95,431,247 | - | - | 95,431,247 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | 2,813,698 | - | - | 2,813,698 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **1,314,070** | **178,277,223** | **23,299,746** | **-** | **202,891,039** |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | - | - | - | 6,884,250 | 6,884,250 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | - | - | - | 158,579,491 | 158,579,491 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 6,489 | - | - | 2,997,605 | 3,004,094 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **6,489** | **-** | **-** | **168,461,346** | **168,467,835** |

## (բ) Իրական արժեք և իրական արժեքի հիերարխիա

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

1-ին մակարդակ. Նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):

2-րդ մակարդակ. Գնահատման մեթոդ, որը հիմնված է դիտարկելի ելակետային տվյալների վրա կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:

3-րդ մակարդակ. Գնահատման մեթոդ, որը կիրառում է նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնետոմսերի ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտարկելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսային և արժութային սվոպերի իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտարկելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար առկա են շուկայում պարտքային արժեթղթերի և բորսայում չշրջանառվող ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսային սվոպերի համար:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերի, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2018թ. հունիսի 30-ի դրությամբ 32,105 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2017թ.-ին՝ 32,132 հազար դրամ) վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը 2018թ. հունիսի 30-ին և 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով.

| | 30 հունիսի 2018թ. | 31 դեկտեմբերի 2017թ. |
|---|---|---|
| հազ. դրամ | 2-րդ մակարդակ | 2-րդ մակարդակ |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ | | |
| - Պետական գանձապետական պարտատոմսեր | 1,095,883 | 1,117,957 |
| - Ածանցյալ ակտիվներ | 89,898 | 196,113 |
| - Ածանցյալ պարտավորություններ | -1,165 | -6,489 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | |
| - Պետական գանձապետական պարտատոմսեր | 10,655,138 | 23,267,614 |
| - Կորպորատիվ պարտատոմսեր | 0 | 0 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ | | |
| - Պետական գանձապետական պարտատոմսեր | 8,120,274 | 0 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. հունիսի 30-ի դրությամբ իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով.

| հազ. դրամ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 42,960,558 | - | 42,960,558 | 42,960,558 |
| Բանկերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 31,803,722 | - | 31,803,722 | 31,803,722 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | - | 102,624,877 | 102,624,877 | 102,624,877 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | 1,533,448 | 1,533,448 | 1,533,448 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 8,516,887 | - | 8,516,887 | 8,516,887 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 76,173,518 | 78,434,884 | 154,608,402 | 154,608,402 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | | 2,646,233 | 2,646,233 | 2,646,233 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով.

| հազ. դրամ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 69,465,410 | - | 69,465,410 | 69,465,410 |
| Բանկերին տրված վարկեր | 10,566,868 | - | 10,566,868 | 10,566,868 |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | 95,431,247 | 95,431,247 | 95,431,247 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | 2,813,698 | 2,813,698 | 2,813,698 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 6,884,250 | - | 6,884,250 | 6,884,250 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 75,427,465 | 83,152,026 | 158,579,491 | 158,579,491 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | 3,004,094 | 3,004,094 | 3,004,094 |